

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)



Սոցիալական աջակցության հասցեականության բարելավումը Հայաստանում

քաղաքականության առաջարկների զեկույց

Երևան 2006

**Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը շնորհակալություն է հայտնում
խորհրդատվություն իրականացրած և հետազոտական թիմին աջակցություն ցուցաբերած անձանց և
մասնագետներին:**

Մուշեղ Թումասյան

**Սոցիալական աջակցության հասցեականության բարելավումը Հայաստանում
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Երևան 2006
info@edrc.am, www.edrc.am**

Բովանդակություն

Ներածություն	4
Օգտագործված տվյալները	4
Սոցիալական աջակցությունը և աղքատությունը.....	6
Սոցիալական ծառայությունները	6
Սոցիալական տրանսֆերտները և աղքատության կրճատումը.....	8
Սոցիալական բյուջեն և աղքատության դեֆիցիտը.....	9
Ընտանեկան նպաստի համակարգի արդյունավետությունը	11
Հասցեավորման արդյունավետությունն ըստ երեխաների առկայության.....	13
Ամփոփում.....	17
Անապահովության գնահատման բանաձևը	19
Ընդհանուր նկարագրություն	19
«Աղքատածին գործոններ կամ ռիսկեր» ցուցանիշների խումբը.....	21
«Հավելումներ» ցուցանիշների խումբը.....	26
«Սահմանափակումներ» ցուցանիշների խումբը.....	27
Ամփոփում.....	29
Քաղաքականության բարելավման ուղղությունները	30
Սկզբունքների սահմանումը.....	30
Ընտանեկան նպաստի համակարգի շահառուները	31
Քաղաքականության առաջարկներ	32
Անապահովության գնահատման բանաձևի բարելավման առաջարկներ	33
Բյուջետային շրջանակ.....	35
Օգտագործված հիմնական գրականություն	37
Աղյուսակներ և հավելվածներ.....	39

Ներածություն

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC)¹ Համաշխարհային բանկի Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի շրջանակներում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատվերով, 2006 թվականին իրականացրեց «Տնային տնտեսությունների հետազոտության» ծրագիրը: Ծրագրի ընդհանուր նպատակն էր օգնել մեծացնելու Հայաստանում սոցիալական աջակցության, մասնավորապես, ընտանեկան նպաստի հասցեականությունը, ինչպես նաև սոցիալական ծառայությունների մատչելիությունը: Ծրագրի խնդիրներն էին՝ գնահատել տնային տնտեսությունների կարիքները և տրամադրվող սոցիալական ծառայությունները, սահմանել վերջինների առաջնահերթությունները, մշակել սոցիալական աջակցության այլընտրանքային ձևեր, ճշգրտել ընտանիքների անապահովության գնահատման բանաձևը:

Ծրագրի արդյունքում.

- իրականացվեցին «Տնային տնտեսությունների համընդհանուր» և «Նպաստառու ընտանիքների նպատակային» ընտրանքային վիճակագրական հետազոտություններ,
- մշակվեց «Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում» տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտության զեկույցը,
- մշակվեց «Սոցիալական աջակցության հասցեականության բարելավումը Հայաստանում» քաղաքականության առաջարկների սույն զեկույցը:

Չեկույցում վերլուծվել են սոցիալական ծառայությունների բյուջեները, աղքատության դեֆիցիտը, ընտանեկան նպաստների համակարգի հասցեականությունը և արդյունավետությունը: Առանձին բաժնում մանրամասն վերլուծվել են ընտանիքների անապահովության գնահատման բանաձևը և դրա առանձին ցուցանիշները: Մշակվել են քաղաքականության առաջարկներ և դրա բյուջետային շրջանակը: Ներկայացվում են ընտանեկան նպաստի համակարգի կազմակերպման և ընտանիքների անապահովության գնահատման բանաձևի բարելավման առաջարկներ:

Օգտագործված տվյալները

Վերլուծություններում հիմնականում կիրառվել է 2006 թվականին ՏՀԿ իրականացրած «Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում» տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտության տվյալների բազան: Հետազոտությունը նախագծվել է երկու առանձին մասերով, որոնցից մեկն ընդգրկում է Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների ընտրանքային համակցությունը՝ Համընդհանուր հետազոտություն (ընտրանքի ծավալը՝ 3800), իսկ երկրորդը՝ 2006-ի ապրիլի դրությամբ Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների ընտրանքային համակցությունը՝ Նպատակային հետազոտություն (ընտրանքի ծավալը՝ 700): Հետազոտությունները ներկայացուցչական են. Հայաստան, Երևան, «Մեծ քաղաքներ» (Ներառում է Գյումրի և Վանաձոր քաղաքները), ընդամենը «Փոքր քաղաքներ» (մյուս բոլոր

¹ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի մասին տե՛ս www.EDRC.am

քաղաքները), ընդամենը «Մեծ և միջին գյուղեր» (500-ից շատ բնակիչ ունեցողներ) և ընդամենը «Փոքր գյուղեր» (մինչև 500 բնակիչ ունեցողներ) մակարդակներում²:

Վերլուծություններում կիրառվել է նաև 2004 թվականին ՀՀ ԱՎԾ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների բազան: Այս հետազոտությունը ներկայացուցչական է Հայաստանի, Մարզերի, Երևան քաղաքի, ընդամենը մյուս քաղաքների և ընդամենը Գյուղերի մակարդակներում: Աղքատության և աղքատության խորության հաշվարկման համար հիմք է հանդիսացել մեկ շնչի հաշվով սպառման ագրեգատը, իսկ աղքատության ընդհանուր գծի և ծայրահեղ աղքատության գծի (պարենային աղքատության գիծ) համար վերցվել է ՀՀ ԱՎԾ 2004 թվականի տվյալները, համապատասխանաբար՝ ամսեկան 9373 և 12467 դրամ մեկ շնչի հաշվով:

Աշխատության համար հիմք են ծառայել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տվյալների բազան, ինչպես նաև այլ վիճակագրական տվյալներ և հրապարակումներ:

² «Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում», տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտության գեկույց, ՏՀՀԿ, Երևան 2006

Սոցիալական աջակցությունը և աղքատությունը

Սոցիալական ծառայությունները

2005-ին ընդունվեցին «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքները, որոնցով և փորձ արվեց կանոնակարգել սոցիալական աջակցության ամբողջ ոլորտը Հայաստանում: Առաջինը սահմանում է սոցիալական աջակցության ձևերը, տրման սկզբունքները, մասնակիցների³ իրավունքները և պարտականությունները: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական ծառայություններից մեկի՝ դրամական օգնության տրամադրման հետ կապված հարաբերությունները, տրման սկզբունքները, մասնակիցները և այլն: «Պետական նպաստների մասին» օրենքը սահմանում է երեք նպաստներ՝ ընտանեկան, երեխայի ծննդյան կապակցությամբ և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի:

Ընդհանուր առմամբ, Սոցիալական աջակցության համակարգը Հայաստանում ուղղված է հետևյալ հիմնական շահառու խմբերին՝

- Աղքատ կամ անապահով ընտանիքներ,
- Երեխաներ,
- Գործազուրկներ,
- Վետերաններ, զինծառայողներ և զոհվածի ընտանիքներ,
- Բռնադատվածներ,
- Փախստականներ,
- Հաշմանդամներ,
- Տարեցներ և այլ կենսաթոշակառուներ և այլն:

Սոցիալական աջակցության հանրային ծրագրերը հիմնականում իրականացվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Բացի այդ, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամն իրականացնում է ՀՀ քաղաքացիների պարտադիր սոցիալական ապահովագրության պետական ծրագիրը (կենսաթոշակային ապահովագրություն):

Սոցիալական աջակցության պետական բյուջեն Հայաստանում մեծ չէ, այն կազմում է ՀՆԱ-ի շուրջ 2 տոկոսը: Սա բավականին փոքր ցուցանիշ է արևելաեվրոպական երկրների հետ համեմատած: Այս գումարը 2005-ին փաստացի կազմել է 44 միլիարդ դրամ, որը 2006-ին աճել է մոտ 27 տոկոսով և կազմել մոտ 60 միլիարդ դրամ կամ բյուջեի 11.5 տոկոսը:

Պետական բյուջեից սոցիալական աջակցության ոլորտում իրականացվող ծրագրերն իրականացվում են ըստ հինգ ծախսային բնագավառների, որոնք 2006-ին ներառել են ավելի քան 60 առանձին ծրագրեր: Ամենամեծ ծախսային բնագավառներն են՝ Պետական նպաստներ բնակչությանը (48 տոկոս) և Կենսաթոշակային ապահովումը (30 տոկոս):

³ Մասնակիցներ են՝ ՀՀ կառավարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (որպես բնագավառի լիազոր մարմին), մարզպետարանները, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, շահառուները:

	2005	2006	2007	Աճի տեմպը, տոկոս		
	փաստացի	ծրագիր	ծրագիր	մլրդ դրամ		
				2006/2005	2007/2006	2007/2005
Ընդամենը բյուջե	44.1	55.9	64.4	26.6	15.2	45.8
Պետական կառավարում	0.8	1.2	1.4	40.4	18.2	66.0
Կենսաթոշակային ապահովում	14.4	17.1	18.3	18.7	7.3	27.4
Պետական նպաստներ բնակչությանը	22.0	27.0	28.1	22.7	3.8	27.4
Սոցիալական ապահովության միջոցառումներ	3.9	4.7	5.8	21.3	23.8	50.2
Այլ սոցիալական ծրագրեր	3.0	5.9	10.8	94.0	82.7	254.5

Պետական նպաստների հիմնական մասը «Ընտանեկան նպաստներ» ծրագիրն է: Կենսաթոշակային ապահովում բնագավառում հիմնականում Սպայական անձնակազմի ու շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծրագրերն են և սոցիալական կենսաթոշակները (տե՛ս հավելվածը):

Մենք փորձել ենք սոցիալական աջակցության պետական բյուջեի ծրագրերը դասակարգել ըստ հիմնական շահառուների և սոցիալական ծառայության տեսակների (տես նաև հավելվածը): Սոցիալական ծրագրերի հիմնական մասն ուղղակի դրամական տրանսֆերտներ են շահառուներին՝ 47 միլիարդ, մոտ 5 միլիարդ ուղղվում է ոչ դրամական տրանսֆերտներին և ծառայություններին, և 3.4 միլիարդ ուղղվում է համակարգի և ծրագրերի կառավարմանը և կազմակերպչական (կամ ադմինիստրատիվ) ծախսերին:

Սոցիալական աջակցության համակարգը և շահառուները (միլիոն դրամ)

	Դրամական ուղղակի տրանսֆերտներ	Ոչ դրամական տրանսֆերտներ, ծառայություններ	Կազմակերպում և կառավարում	Ընդամենը
Ընդամենը պետական բյուջե	47,219	5,237	3,414	55,869.9
Անապահով ընտանիքներ	24,366	0	380	24,746
Երեխաներ	2,578	1,415	6	3,999
Գործազուրկներ	10	766	23	799
Վետերաններ, զինծառայողներ և զոհվածի ընտանիքներ	15,723	15	5	15,743
Հաշմանդամներ և տարեցներ	3,468	2,849	139	6,457
Բռնադատվածներ, փախստականներ և այլն	1,074	172	30	1,275
Պետական կառավարում և այլ չդասակարգված	0	20	2,831	2,851

Աղբյուրը՝ 2006 թ. ՀՀ պետական բյուջե, դասակարգումը՝ ՏՀՀԿ փորձագետների:

Այսպիսով, սոցիալական աջակցության համակարգի 85 տոկոսը դրամական տրանսֆերտներ են: Ընդ որում, համակարգի շահառուներն անապահով կամ աղքատ ընտանիքներն են (ստանում են բյուջեի 44 տոկոսը) և պատերազմի վետերանները, զինծառայողները և զոհվածի ընտանիքները՝ ստանում են բյուջեի 28 տոկոսը: Երեխաները ստանում են ծրագրերի 5 տոկոսը, հաշմանդամները՝ 6 տոկոսը (հաշվի չառած ընտանեկան նպաստ ստացողներին):

Սոցիալական աջակցության համակարգը և շահառուները (տոկոս ընդամենի նկատմամբ)

	Դրամական ուղղակի տրանսֆերտներ	Ոչ դրամական տրանսֆերտներ, ծառայություններ	Կազմակերպում և կառավարում	Ընդամենը
Ընդամենը պետական բյուջե	85	9	6	100
Անապահով ընտանիքներ	44	0	1	44
Երեխաներ	5	3	0	7
Գործազուրկներ	0	1	0	1
Վետերաններ, զինծառայողներ և զոհվածի ընտանիքներ	28	0	0	28
Հաշմանդամներ և տարեցներ	6	5	0	12
Բռնադատվածներ, փախստականներ և այլն	2	0	0	2
Պետական կառավարում և այլ չդասակարգված	0	0	5	5

Աղբյուրը՝ 2006 թ. ՀՀ պետական բյուջե, դասակարգումը՝ ՏՀՀԿ փորձագետների:

Այսպիսով, հիմնական սոցիալական ծառայությունը՝ դրամական օգնությունն է: Եթե հաշվի չառնենք զինծառայողների կենսաթոշակային ապահովագրության ծրագրերը⁴, ապա 2006-ի սոցիալական ապահովության պետական բյուջեի ավելի քան 50 տոկոսը կկազմի Ընտանեկան նպաստ ծրագիրը (24.4 միլիարդ դրամ): Ընտանեկան նպաստ ծրագիրը մյուս սոցիալական ծրագրերի նկատմամբ ունի անհամեմատ մեծ բյուջե և անհամեմատ մեծաթիվ շահառուներ (շուրջ 140 հազար ընտանիք):

Սոցիալական տրանսֆերտները և աղքատության կրճատումը

2006 թվականին, ըստ ՏՀՀԿ ԱԸՍԾՐ⁵ հետազոտության արդյունքների, տնային տնտեսությունների 30.2 տոկոսը սեփական գնահատմամբ աղքատ են, իսկ 9.9 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ: 2004 թվականին, ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ⁶ տվյալներով, Հայաստանում աղքատ են եղել տնային տնտեսությունների 29.5 տոկոսը (կամ բնակչության 34.6 տոկոսը), իսկ ծայրահեղ աղքատ՝ 5.2 տոկոսը (կամ բնակչության 6.4 տոկոսը):

Այնուամենայնիվ, Հայաստանում ընտանեկան նպաստ են ստանում տնային տնտեսությունների շուրջ 16-17 տոկոսը: Ընտանեկան նպաստները և մյուս սոցիալական տրանսֆերտները Հայաստանում մեղմել են թե՛ աղքատությունը, թե՛ ծայրահեղ աղքատությունը:

Այսպես, եթե 2004-ին չիրականացվեին պետական նպաստների և դրամական օգնության ծրագրեր, ապա, ըստ գնահատականների, աղքատ բնակչության մակարդակը 34.6-ի փոխարեն կկազմեր 36.6 տոկոս⁷, իսկ ծայրահեղ աղքատությունը 6.4-ի փոխարեն կկազմեր 8.2 տոկոս: Այսինքն, պետական սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման արդյունքում, հաշվի չառած սոցիալական այլ կենսաթոշակների դերը, 2004-ին աղքատությունը կրճատվել է շուրջ 5.4 տոկոսով (կամ 2 տոկոսային կետով), իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 21.6 տոկոսով (կամ 1.8 տոկոսային կետով): Ընդ որում, աղքատության

⁴ Զինծառայողները, ի տարբերություն մյուս քաղաքացիների, չեն մասնակցում պարտադիր պետական կենսաթոշակային ապահովագրության ծրագրին, չեն կատարում սոցիալական ապահովագրական վճարներ և կենսաթոշակ են ստանում պետական բյուջեից և ոչ թե ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամից:

⁵ «Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում» տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտություն


⁶ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտություն

⁷ Հաշվարկները չեն վերաբերվում սոցիալական և այլ կենսաթոշակների տրամադրմանը, այսինքն՝ ընթացիկ ծախսերի մակարդակը հաշվարկված է առանց ընտանեկան նպաստների, միանվագ դրամական օգնության և այլ նպաստների տեսքով ստացված եկամուտների՝ ելթարելով, որ նման տրանսֆերտների չստացումը նույն չափով կնվազեցներ տնային տնտեսության առկա բնակչության ծախսերի մակարդակը, հաշվարկները՝ ՏՀՀԿ-ի:

կրճատման առումով հիմնական դերը պետական բյուջեի ամենամեծ սոցիալական ծրագրինն է՝ Աղքատության ընտանեկան նպաստինը (տե՛ս գծապատկեր 1):

Աղքատության ընտանեկան նպաստի տրամադրման արդյունքում աղքատությունը կրճատվել է 4.6 (1.7 տոկոսային կետով), իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 17.6 տոկոսով (1.4 տոկոսային կետով): Հատկապես մեծ է ծայրահեղ աղքատության կրճատումը փոքր ու միջին քաղաքներում (23 տոկոսով) և գյուղական բնակավայրերում (16 տոկոսով):

Գծապատկեր 1. Աղքատության կրճատումը սոցիալական ծրագրերի արդյունքում



Սոցիալական բյուջեն և աղքատության դեֆիցիտը

ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ տվյալների բազայի վերլուծության արդյունքում ստացվել է, որ 2004 թվականին Հայաստանում աղքատության խորությունը կազմել է 21.3 տոկոս: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր աղքատի միջին հաշվով ամսեկան պակասել է 4129 դրամ⁸ աղքատության գծից դուրս գալու համար: Բոլոր աղքատների համար այս գումարն ընդհանուր տարեկան կազմում է 54.5 մլրդ դրամ: Այսինքն՝ առկա սոցիալական ծրագրերից և տրանսֆերտներից բացի, 2004-ին լրացուցիչ պահանջվել է մոտ 55 միլիարդ դրամ կամ այդ չափով աղքատների ծախսերի աճ, որպեսզի Հայաստանում աղքատներ չլինեին:

Սոցիալական աջակցության և ապահովագրության ընդհանուր պետական ծրագրերը աղքատների ծախսերի դեֆիցիտը 2004-ին կրճատել են շուրջ 38 տոկոսով, իսկ պետական նպաստները և այլ դրամական օգնության ծրագրերը, առանց բոլոր տիպի կենսաթոշակների, աղքատության դեֆիցիտը կրճատել են 12.7 տոկոսով:

Արդյունքում, եթե պետական նպաստների և դրամական օգնության ծրագրեր չիրականացվեին, գնահատվում է, որ աղքատության խորությունը կկազմեր 23.1 տոկոս, իսկ աղքատության դեֆիցիտը՝ տարեկան շուրջ 62 միլիարդ դրամ⁹: Այս գումարը, այսինքն՝ աղքատությունից դուրս գալու համար պահանջվող լրացուցիչ ծախսերի մեծությունը (բոլոր աղքատների համար գումարային), ավելի քան 70 տոկոսով գերազանցում է սոցիալական


⁸ Աղքատության ընդհանուր գծից կազմել է 19373 դրամ, աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական գեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006:

⁹ Հաշվարկները չեն վերաբերվում սոցիալական և այլ կենսաթոշակների տրամադրմանը, այսինքն՝ ընթացիկ ծախսերի մակարդակը հաշվարկված է առանց ընտանեկան նպաստների, միանվագ դրամական օգնության և այլ նպաստների տեսքով ստացված եկամուտների:

աշակցության բոլոր ծրագրերի ընդհանուր բյուջեն¹⁰ կամ ավելի քան 3 անգամ՝ ընտանեկան նպաստների բյուջեն:

Եթե սոցիալական աշակցությանն ուղղվող պետական բյուջեի միջոցներն ամբողջությամբ, որպես դրամական տրանսֆերտներ, բաժանենք միայն աղքատներին, ապա դա չի բավարարի աղքատությունը հաղթահարելու համար: Կատարյալ հասցեականության դեպքում Ընտանեկան նպաստ ծրագրի բյուջեն մոտավորապես կբավարարի միայն գյուղերում կամ միայն Երևանում աղքատության հաղթահարման համար:

Գծապատկեր 2. Աղքատության դեֆիցիտը և պետական բյուջեի սոցիալական աշակցության ծախսերը




Ծայրահեղ աղքատությունը հաղթահարելու համար պահանջվող գումարը շատ ավելի փոքր է, և այն պետական նպաստների միջոցով հնարավոր է հեշտությամբ հաղթահարել: Ծայրահեղ աղքատության խորությունը 17 տոկոս է, որը նշանակում է, որ ծայրահեղ աղքատությունից դուրս գալու համար տարեկան պակասում է 5.2 մլրդ դրամ: Եթե չվճարվեին ընտանեկան նպաստները, ապա այդ գումարը կկազմեր շուրջ 7 մլրդ դրամ:

Այսպիսով, որպեսզի 2004-ին Հայաստանում ծայրահեղ աղքատ մարդ չլիներ, պահանջվում էր ոչ մեծ ֆինանսական ներդրումներ: Դրա համար, կատարյալ հասցեականության պայմաններում, բավարար էր 2004-ի ընտանեկան նպաստների բյուջեի 44 տոկոսը, որը հավասար է 2006-ի ընտանեկան նպաստի բյուջեի 38 տոկոսին:

Դիցուք, որպես օրինակ, եթե ընտանեկան նպաստի բյուջեն կատարյալ հասցեականությամբ բաշխվեր այնպես, որ ծայրահեղ աղքատությունը հաղթահարվեր (այսինքն՝ ծայրահեղ աղքատներն այնքան գումար ստանային, որ դուրս գային միայն «ծայրահեղ աղքատության գծից»), ապա դրանից հետո 2004-ի բյուջեն դեռ կբավարարեր, որ յուրաքանչյուր աղքատ ընտանիքի միջին ամսեկան վճարվեր 2898 դրամ նպաստ, իսկ 2006 թվականի բյուջեի չափ գումար ունենալու դեպքում՝ 5692 դրամ:

¹⁰ Խոսքը վերաբերվում է միայն պետական բյուջեին և հաշվի չի առնվում ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն:

Գծապատկեր 3. Ծայրահեղ աղքատության դեֆիցիտը և պետական բյուջեի սոցիալական աջակցության ծախսերը



Բերենք մեկ այլ պայմանական օրինակ. եթե ընտանեկան նպաստները կատարյալ հասցեականությամբ բաշխվեր (ներքևից-վերև՝ սկսած ամենաաղքատից) այնպես, որ ամենաաղքատները դուրս գային «աղքատության ընդհանուր գծից», ապա 2004-ի բյուջեն կբավարարեր, որ բնակչության ամենաաղքատ 3.9 տոկոսը դուրս գար աղքատությունից (այս դեպքում աղքատությունը կկազմեր 32.4 տոկոս): Նույն օրինակով 2006-ի բյուջեն 2004-ի համար բավարար կլիներ, որ բնակչության ամենաաղքատ 6.7 տոկոսը դուրս գար աղքատության ընդհանուր գծից, իսկ աղքատության մակարդակը կկազմեր 29.6 տոկոս:

<i>2004 թվականի համար</i>	Շահառուները, % բնակչության նկատմամբ	Աղքատությունից դուրս եկած մարդիկ, % բնակչության նկատմամբ	1 շնչի հաշվով ծախսերի նվազագույն մակարդակ, դրամ	Աղքատության մակարդակը, % բնակչության նկատմամբ
Բաշխման գործող համակարգը	14.7	1.7	2,732	34.6
Ներքևից-վերև բաշխման օրինակ, 2004-ի բյուջեով	3.9	3.9	10,550	32.4
Ներքևից-վերև բաշխման օրինակ, 2006-ի բյուջեով	6.7	6.7	11,972	29.6


Ընտանեկան նպաստի համակարգի արդյունավետությունը

Բանաձևի կիրառման արդյունքում ավելի շատ ռեսուրսներ են հասել աղքատներին, քան կհասնեին, եթե հասցեավորման որևէ փորձ չարվեր, այսինքն՝ համակարգը պրոգրեսիվ է: Առաջին դեցիլում համակարգի պրոգրեսիվության ցուցանիշը 1.4 է, որը նշանակում է, որ ընդգրկման սահմանափակումների և պահանջների կիրառվող մոտեցումների արդյունքում (անապահովության գնահատման բանաձևի կիրառում) ամենաաղքատ 10 տոկոս բնակչությունը բյուջեից ստացել է 40 տոկոսով ավելի, քան եթե որևէ բանաձև չկիրառվեր կամ բաշխումը լիներ լրիվ պատահական: Ամենաաղքատ 20 տոկոսի համար այս նույն ցուցանիշն իջնում է 1.3, իսկ ամենաաղքատ 40 տոկոսի դեպքում՝ 1.2: Թեև համակարգը պրոգրեսիվ է, սակայն այն արդյունավետ չէ:

Ընտանեկան նպաստի համակարգի միջոցով նպաստ ստացող ընտանիքների թվաքանակը Հայաստանում շուրջ երկու անգամ գերազանցում է ծայրահեղ աղքատների թվաքանակին, իսկ 2004-ին փաստացի բաշխված ընտանեկան նպաստի գումարը (բյուջեն) ավելի քան 2

անգամ գերազանցել է ծայրահեղ աղքատության դեֆիցիտը: Այս պայմաններում ծայրահեղ աղքատների 62 տոկոսը չեն ընդգրկվել համակարգում: Համակարգում չեն ընդգրկվել աղքատների 76 տոկոսը: Մինչդեռ ընտանեկան նպաստների բյուջեի մոտ 30 տոկոսը բաժին է հասել բնակչության ոչ աղքատ 50 տոկոսին:


Գծապատկեր 4. Ընտանեկան նպաստի բյուջեի և նպաստառուների բաշխումն ըստ բնակչության բարեկեցության սանդղակի*



* Սերքևի 10%-ն ամենաաղքատ 10 տոկոսն է կամ առաջին դեցիլն է ըստ սպառման ագրեգատի, իսկ վերևի 50%-ը բնակչության ամենաբարեկեցիկ 50 տոկոսն է:

2006 թվականին, ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների հետազոտության արդյունքների համաձայն¹¹, այս ընտանիքների 31 տոկոսն են իրենց ծայրահեղ աղքատ համարել, իսկ 47 տոկոսը՝ աղքատ: Փաստացի նպաստ ստացող ընտանիքների 22 տոկոսն իրենց համարել են ոչ աղքատ կամ ապահովված:

Գծապատկեր 5. Ընդգրկման և Չընդգրկման սխալի գնահատականները




¹¹ Տե՛ս «Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում», տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտության զեկույց, S234, Երևան 2006

2004-ի ՏՏԿԱ հետազոտության տվյալների վերլուծության համաձայն, նպաստառուների ընդամենը 18 տոկոսն է ծայրահեղ աղքատ, 36 տոկոսը՝ աղքատ, իսկ 47 տոկոսը՝ ոչ աղքատ կամ ապահովված:

Այսպիսով, 2004-ին «Ընդգրկման սխալը» կազմել է 46.5 տոկոս, իսկ «Չընդգրկման սխալը»՝ 75.6 տոկոս: Ընդգրկման սխալն ամենաբարձրը գյուղերում է՝ ավելի քան 53 տոկոս: Այսինքն՝ գյուղերում նպաստ ստացողների կեսից ավելին աղքատներ չեն (տե՛ս գծապատկեր 5): Չընդգրկման սխալն ամենաբարձրը Երևանում է՝ 86 տոկոս, այսինքն՝ Երևանի աղքատների 86 տոկոսը նպաստ չեն ստանում:

Եթե ընդունենք, որ Ընտանեկան նպաստի համակարգի շահառուները ծայրահեղ աղքատ, այսինքն՝ աղքատության պարենային գիծը չապահովող ընտանիքներն են, ապա Ընդգրկման սխալը Հանրապետությունում կկազմի 82.6 տոկոս, իսկ Չընդգրկման սխալը՝ 62 տոկոս: Վերջինս ամենաբարձրը Երևանում է՝ ավելի քան 72 տոկոս և գյուղերում՝ շուրջ 68 տոկոս:

Գծապատկեր 6. Չընդգրկման սխալի գնահատականը ծայրահեղ աղքատների դեպքում



Հասցեավորման արդյունավետությունն ըստ երեխաների առկայության

Տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի ամենամաքողչական հետազոտությունը Հայաստանում ՀՀ ԱՎԾ կողմից պարբերաբար իրականացվող ՏՏԿԱ հետազոտությունն է: Սակայն այս հետազոտության ամենաթարմ տվյալները վերաբերվում են 2005-ին, որոնք դեռևս նախնական են և այս պահին չեն հրապարակվել: Այս նախնական տվյալներն արդեն իսկ հուշում են, որ եապես չեն փոխվել Ընտանեկան նպաստի արդյունավետության ցուցանիշները 2004-ի համեմատ, մասնավորապես, աղքատության և ծայրահեղ աղքատության կրճատման վրա ընտանեկան նպաստի ազդեցության առումով:

Ընտանեկան նպաստի համակարգում պարբերաբար իրականացվում են փոփոխություններ, մասնավորապես, յուրաքանչյուր բյուջետային տարում վերանայվում են նպաստի բազային չափը և երեխաների հաշվով տրվող հավելումները: Այս փոփոխությունները կարող են փոխել համակարգի արդյունավետության և շահառուների ընդգրկվածության ընդհանուր պատկերը: 2006 թվականին առկա իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության միակ աղբյուրը, հենց այս նպատակի համար իրականացված տնային տնտեսությունների Համընդհանուր և նպաստառու ընտանիքների Նպատակային

հետազոտության տվյալների բազան է¹²: Վերջինիս հիման վրա ներկայացվում է հակիրճ վերլուծություն, որը վերաբերվում է համակարգի արդյունավետության ընդհանուր գնահատականին՝ 2006-ի համար և, մասնավորապես, ըստ ընտանիքներում երեխաների առկայության գործոնի հասցեավորման արդյունավետությանը:

Ընտանեկան նպաստի համակարգի արդյունավետության գնահատման համար ներկայացվող վերլուծություններում կիրառել ենք Ծայրահեղ աղքատության սուբյեկտիվ գնահատականի ցուցանիշը: Այս ցուցանիշը հաշվարկվում է հիմք ընդունելով ծախսերի տվյալ մակարդակի և բարեկեցության տվյալ նկարագրին համապատասխանության վերաբերյալ տնային տնտեսությունների կողմից տրված սեփական, սուբյեկտիվ գնահատականները: Հնարավոր չափազանցումների և պատկերացումների որոշ տարբերությունների արդյունքում, սպասվում է, որ ցուցանիշը կունենա ավելի մեծ արժեք, քան ծայրահեղ աղքատությունը, եթե հաշվարկվեր պաշտոնական մեթոդաբանությամբ, այն է՝ փաստացի սպառողական ծախսերի և պարենային աղքատության գծի համադրմամբ:

Ենթադրվում է, որ ընտանեկան նպաստի համակարգի շահառուները պետք է լինեն պարենային գծից ներքև և փոքր-ինչ վերև գտնվող ընտանիքները: Այս առումով Ծայրահեղ աղքատության սուբյեկտիվ գնահատականի ցուցանիշը կարող է լավ մոտարկում հանդիսանալ ընտանեկան նպաստի համակարգի շահառուների նկարագրման համար:

Սուբյեկտիվ գնահատմամբ ծայրահեղ աղքատ համարված բոլոր տնային տնտեսությունների (կազմում է 9.9 տոկոս) մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերը ցածր են եղել աղքատության ընդհանուր գծից, այսինքն՝ բոլորը աղքատ տնային տնտեսություններ են: Միաժամանակ, վերլուծությունները թույլ են տալիս պնդել, որ սուբյեկտիվ ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները ներառում են գրեթե բոլոր այն տնային տնտեսությունները, որոնց ծախսերը ցածր են աղքատության պարենային գծից: Այսպիսով, սուբյեկտիվ գնահատմամբ ծայրահեղ աղքատները ներառում են աղքատության գծի և սպառման ագրեգատի համադրման մեթոդաբանությամբ ծայրահեղ աղքատ համարվող բոլոր տնային տնտեսությունները և աղքատ համարվող տնային տնտեսությունների մի մասը:

Հետազոտության համաձայն, կիրառելով ծայրահեղ աղքատության սուբյեկտիվ գնահատականի ցուցանիշը (այսուհետ՝ ծայրահեղ աղքատ կամ ծայրահեղ աղքատություն), ստացվում է, որ ընտանեկան նպաստի համակարգում 2006 թվականին «ընդգրկման սխալը» կազմել է շուրջ 77 տոկոս, իսկ «չընդգրկման սխալը»՝ 65 տոկոս: Չընդգրկման սխալն էապես տարբերվում է ըստ ընտանիքներում երեխայի առկայության գործոնի, իսկ ընդգրկման սխալը՝ ոչ այնքան:

Համակարգն ամենաարդյունավետն է 3 երեխա ունեցող տնային տնտեսությունների խմբում և ամենաանարդյունավետը՝ 1 երեխա ունեցող տնային տնտեսությունների խմբում: Այսինքն՝ ընդգրկման և չընդգրկման սխալներն ամենափոքրն են 3 երեխա ունեցող տնային տնտեսությունների համար և ամենամեծը՝ 1 երեխա ունեցող տնային տնտեսությունների համար (տե՛ս աղյուսակ):

3 երեխա ունեցող տնային տնտեսությունների համար չընդգրկման սխալը կազմում է 29 տոկոս, որը նշանակում է, որ երեք երեխա ունեցող ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների ընդամենը 29 տոկոսն է, որ նպաստ չի ստանում: Մինչդեռ 1 երեխա ունեցող ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների 78 տոկոսը նպաստ չի ստանում:

¹² Տե՛ս «Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում», S234 2006թ.

Ծայրահեղ աղքատության սուբյեկտիվ գնահատականը և ընտանեկան նպաստի համակարգի արդյունավետության գնահատման ցուցանիշները, ըստ S234 Համընդհանուր հետազոտության, 2006թ.


տնային տնտեսությունները ըստ երեխաների քանակի	Տնային տնտեսությունների կառուցվածքը	Ծայրահեղ աղքատությունը *	Ծայրահեղ աղքատների կառուցվածքը	Նպաստառուների կառուցվածքը	Նպաստառուները *	Ծայրահեղ աղքատ են նպաստ են ստանում **	Ծայրահեղ աղքատ չեն նպաստ են ստանում **	Ծայրահեղ աղքատ են նպաստ չեն ստանում ***
Երեխա չկա	44.8	11.2	50.5	32.7	11.0	28.2	71.8	72.1
1 երեխա	22.0	6.5	14.4	15.0	10.3	14.0	86.0	77.8
2 երեխա	23.1	8.1	18.9	26.3	17.2	17.2	82.8	63.4
3 երեխա	7.8	14.1	11.2	18.3	35.2	28.6	71.4	28.6
4 և ավելի	2.2	22.9	5.1	7.8	54.2	26.7	73.3	36.8
Ընդամենը	100.0	9.9	100.0	100.0	15.1	23.1	76.9	64.6

* Տվյալ խմբի տնային տնտեսությունների նկատմամբ, տոկոս
 ** Տվյալ խմբի նպաստառու տնային տնտեսությունների նկատմամբ
 *** Տվյալ խմբի Ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների նկատմամբ

Ընդգրկման սխալը բոլոր դեպքերի համար բավականին բարձր է, այսինքն՝ նպաստ ստացող տնային տնտեսությունների մեծ մասը ծայրահեղ աղքատ չէ (տե՛ս արդյունակը): Այսպես, 3 երեխա ունեցող նպաստառու տնային տնտեսությունների 71 տոկոսը ծայրահեղ աղքատ չեն, իսկ 1 երեխա ունեցող նպաստառուներից՝ 86 տոկոսը:

Չընդգրկման սխալը փոքր է նաև 4 և ավելի երեխա ունեցող տնային տնտեսություններում՝ 36.8 տոկոս, սակայն այս խմբում նպաստը բաշխվել է ավելի քան ամեն երկրորդ տնային տնտեսությանը (54 տոկոսին): Վերլուծության արդյունքում ստացվում է, որ ընդգրկման սխալի մեծությունը կախված է ոչ թե տվյալ տիպի ընտանիքների համար կիրառվող հասցեավորման մեթոդի արդյունավետությունից, այլ ավելի շատ այդ խմբում բաշխվող նպաստների քանակից: Եթե տվյալ խմբում նպաստ շատ է բաշխվում, չընդգրկման սխալը փոքրանում է, թեև նպաստառուների մեջ ծայրահեղ աղքատների կշիռը չի փոխվում: Գծապատկեր 7-ում ներկայացված կորը ցույց է տալիս նպաստառու ընտանիքների քանակի և այդ խմբում ծայրահեղ աղքատ ընտանիքների հարաբերակցությունը՝ ըստ առանձնացված ընտանիքների տիպերի: Այս ցուցանիշի միջին հանրապետական արժեքը շուրջ 1.5 է, ինչը նշանակում է, որ նպաստառուների քանակը 1.5 անգամ գերազանցում է ծայրահեղ աղքատների քանակին:

Գծապատկեր 7. Համակարգի արդյունավետության ցուցանիշներ, ըստ S234 2006թ. հետազոտության




Գծապատկեր 7-ի համաձայն, նպաստառու ընտանիքների և ծայրահեղ աղքատ ընտանիքների հարաբերակցությունն անտարբեր է Ընդգրկված ծայրահեղ աղքատներ ցուցանիշի նկատմամբ (նպաստառուների մեջ ծայրահեղ աղքատների կշիռը), սակայն որոշակիորեն հակադարձ կորելացված է չընդգրկված սխալի հետ (նպաստ չստացող ծայրահեղ աղքատները բոլոր ծայրահեղ աղքատների նկատմամբ): Ընդհանուր առմամբ, բացառությամբ 1 և 2 երեխա ունեցող ընտանիքների խմբերի, Ընդգրկված ծայրահեղ աղքատների ցուցանիշը գրեթե կայուն է՝ 27-28 տոկոս, անկախ ծայրահեղ աղքատների նկատմամբ նպաստառուների քանակից: Եթե նպաստառու ընտանիքների և փաստացի ծայրահեղ աղքատ ընտանիքների հարաբերակցությունը մեծ է, ապա չընդգրկված սխալը փոքր է, և հակառակը: Օրինակ՝ երեխա չունեցողների խմբի 11 տոկոսին է նպաստ տրվում, որը համապատասխանում է խմբում ծայրահեղ աղքատների թվաքանակին (գործակիցը հավասար է մոտ 1-ի): Արդյունքում, նպաստառուների 28 տոկոսը ծայրահեղ աղքատ են, սակայն ծայրահեղ աղքատների 72 տոկոսն ընդգրկված չեն: 3 երեխա ունեցողների 14 տոկոսն է ծայրահեղ աղքատ, բայց նպաստառուների թվաքանակն անհամեմատ մեծ է (գործակիցը հավասար է մոտ 2.5-ի): Արդյունքում, ծայրահեղ աղքատ են նպաստառուների կրկին մոտ 28 տոկոսը, բայց քանի որ խմբում 2.5 անգամ ավելի շատ է նպաստառուների քանակը, ուստի ընդգրկված սխալն ավելի փոքր է՝ 28 տոկոս:

1 և 2 երեխա ունեցող տնային տնտեսությունների համար բանաձևը առավել ոչ հասցեական է. նպաստառուների մեջ ծայրահեղ աղքատները 14 և 17 տոկոս են կազմում: Եթե այս խմբերը համեմատենք երեխա չունեցողների հետ, ստացվում է, որ բացի այն, որ ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունը չափազանց փոքր է, մեծ է չընդգրկված սխալը՝ այն դեպքում, երբ նպաստառուների թվաքանակը ծայրահեղ աղքատների նկատմամբ շատ ավելի մեծ է (տե՛ս գծապատկեր 7):

Ամփոփելով, նախ պետք է նկատել, որ բոլոր տիպի ընտանիքների համար ծայրահեղ աղքատների կշիռը նպաստառու ընտանիքների մեջ ավելի մեծ է, քան տվյալ խմբի բոլոր ընտանիքների մեջ:

Գծապատկեր 8. Համակարգի արդյունավետության ցուցանիշներ, ըստ S234 2006թ հետազոտության



Բոլոր տնային տնտեսությունների 9.9 տոկոսն են ծայրահեղ աղքատ, սակայն նպաստառու տնային տնտեսությունների 23 տոկոսն են ծայրահեղ աղքատ (տե՛ս գծապատկեր 8): Սա նշանակում է, որ համակարգը պրոգրեսիվ է, կամ հասցեավորման մեթոդների կիրառման արդյունքում ավելի շատ ռեսուրսներ է հատկացվում աղքատներին, քան եթե որևէ բանաձև չկիրառվեր: Համակարգը համեմատաբար պրոգրեսիվ է երեխա չունեցողների և երեք երեխա ունեցող ընտանիքների համար: 4 երեխա ունեցող ընտանիքների խմբում փաստացի

ծայրահեղ աղքատների համեմատ նպաստառուների մեջ ծայրահեղ աղքատների թվաքանակն ամենափոքրն է, թեև կրկին պրոգրեսիվ է: Այսպիսով, ըստ երեխաների թվաքանակի հասցեավորման արդյունավետությունը տարբեր է, և չի արձանագրվում երեխաների քանակի աճին զուգընթաց հասցեավորման փոփոխման միտում: Մասնավորապես, ընդգրկման սխալը չի փոխվում ընտանիքներում երեխաների թվաքանակից կախված, իսկ չընդգրկման սխալը տարբերվում է ըստ ընտանիքներում երեխաների թվաքանակի:

Ամփոփում

Հայաստանում սոցիալական աջակցության բյուջեն հիմնականում ընդգրկում է ուղղակի դրամական տրանսֆերտների ծրագրեր: Սոցիալական աջակցության համակարգի հիմնական հասցեատերերն անապահով և աղքատ ընտանիքներն են: Անապահով ընտանիքներին է ուղղված սոցիալական աջակցության պետական բյուջեի մեծ մասը՝ Ընտանեկան նպաստ ծրագրի տեսքով:

Աղքատության դեֆիցիտը Հայաստանում շատ ավելի մեծ է, քան դրան ուղղվող դրամական տրանսֆերտների բյուջեն: Սա, ըստ էության, նորմալ է, քանի որ չի կարող նպատակահարմար համարվել պետական բյուջեից դրամական տրանսֆերտների միջոցով երկրում աղքատության ամբողջական հաղթահարմանն ուղղված ծրագրի իրագործումը:

Աղքատության հաղթահարման առումով այսօր առավել մեծ դեր և կարևորություն պետք է ստանան ոչ դրամական ուղղակի տրանսֆերտային ծրագրերը, մինչդեռ Հայաստանում սրանք շատ փոքր են:

Դրամական տրանսֆերտները նախ պետք է կենտրոնանան հատկապես ծայրահեղ աղքատության հաղթահարման վրա: Այս նպատակի համար պահանջվող միջոցները՝ ծայրահեղ աղքատության դեֆիցիտ, անհամեմատ փոքր են և մատչելի:

Ընտանեկան նպաստի համակարգը, կիրառվող մոտարկման մեթոդի (բանաձևի) արդյունքում, պրոգրեսիվ է, այսինքն՝ աղքատներն ավելի շատ ռեսուրսներ են ստանում, քան կստանային պատահական բաշխման դեպքում: Արդյունքում, երկրում մեղմվում է թե՛ աղքատությունը, թե՛ ծայրահեղ աղքատությունը: 2004-ին աղքատությունը կրճատվել է 2 տոկոսային կետով, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 1.8 տոկոսային կետով, որին գործող համակարգը հասել է բյուջեի 30 տոկոսը ոչ աղքատ 50 տոկոսին բաշխելու գնով: Այս արդյունքները գոհացուցիչ չեն կարող համարվել, իսկ համակարգը՝ արդյունավետ, քանի որ ծայրահեղ աղքատների մեծամասնությունը համակարգում ընդգրկված չէ, այն դեպքում, երբ բյուջեն երկու և ավելի անգամ գերազանցում է ծայրահեղ աղքատության դեֆիցիտը, իսկ փաստացի նպաստառուների թվաքանակն ավելի քան երկու անգամ գերազանցում է Հայաստանում ծայրահեղ աղքատ ընտանիքների թվաքանակը (պաշտոնական ցուցանիշ):

2004-ի ցուցանիշների վերլուծությամբ պարզվել է, որ «Ընդգրկման սխալը» կազմել է 47 տոկոս, իսկ «Չընդգրկման սխալը»՝ 76 տոկոս: «Ընդգրկման սխալը» ամենաբարձրը գյուղերում է՝ ավելի քան 53 տոկոս, այսինքն՝ գյուղերում նպաստ ստացողների կեսից ավելին աղքատներ չեն: «Չընդգրկման սխալը» ամենաբարձրը Երևանում է՝ 86 տոկոս, այսինքն՝ Երևանի աղքատների 86 տոկոսը նպաստ չեն ստանում: Երևանում նպաստ չեն ստանում ծայրահեղ աղքատների ավելի քան 72 տոկոսը, իսկ գյուղերում՝ շուրջ 68 տոկոսը:

2006-ին իրականացված մեր հետազոտությունների համաձայն, իրենց ծայրահեղ աղքատ են համարել տնային տնտեսությունների 9.9 տոկոսը, որը բավականին բարձր է ծայրահեղ աղքատության սպասվող պաշտոնական ցուցանիշից: Այս տնային տնտեսությունների 65

տոկոսը չեն ընդգրկվել համակարգում, իսկ համակարգում ընդգրկվածների 77 տոկոսը իրենց ծայրահեղ աղքատ չեն համարել:

Չամակարգի արդյունավետությունն էապես կախված չէ ընտանիքներում երեխաների առկայության գործոնից: Մասնավորապես, ոչ ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունը համակարգում, գրեթե բոլոր տիպի ընտանիքներում, բարձր է: Չընդգրկման սխալն ամենափոքրն է 3 երեխա ունեցող ընտանիքներում: Չընդգրկման սխալը փոքր է նաև 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքներում: Սակայն, սա պայմանավորվում է ոչ թե հասցեավորման մեթոդի արդյունավետությամբ, այլ այն հանգամանքով, որ 4 և ավելի երեխա ունեցող ամեն երկրորդ, իսկ 3 երեխա ունեցող ամեն երրորդ ընտանիքը (նվազագույնը) նպաստ է ստանում:

1 կամ 2 երեխա ունեցող ընտանիքների խմբերում համակարգն ամենաանարդյունավետն է՝ մեծ է թե՛ ընդգրկման սխալը, թե՛ չընդգրկման սխալը:

Ընդհանուր առմամբ, համակարգում մեծ է սխալ ընդգրկման գործակիցը, իսկ չընդգրկման սխալի հնարավոր կրճատումը բազմազավակ ընտանիքների համար, որոնք շատ քիչ են Չայաստանում, ապահովվել է նպաստառուների մեծաթիվ բանակով:

Անապահովության գնահատման բանաձևը

Ընդհանուր նկարագրություն

Ընտանեկան նպաստի համակարգը Հայաստանում ամենամեծ սոցիալական աջակցության ծրագիրն է, որի միջոցով աղքատ կամ անապահով համարված ընտանիքները պետական բյուջեից ստանում են դրամական օգնություն՝ նպաստ:

Համակարգն ուղղված է անապահով կամ աղքատ ընտանիքներին: Սակայն, հայտնի է, որ աղքատության գնահատումը և բացահայտումն այնքան էլ պարզ կամ հեշտ գործ չէ: Խնդիրը, հատկապես, բարդ է մեծ ստվերային տնտեսության, աշխատանքային և այլ եկամուտների, ակտիվների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման տեխնոլոգիաների գրեթե բացակայության, հասարակությունում առկա բացասական ավանդույթների և այլնի պայմաններում: Այս դժվարությունները կարճաժամկետ չեն, և դեռ շատ տարիներ կպահանջվեն, որ իրական աղքատների գնահատման դժվարին խնդիրը հեշտանա:

Ներկայում, ընտանեկան նպաստի համակարգում, աղքատների կամ անապահով ընտանիքների որոշման համար կիրառվում է մոտարկման մեթոդը: Կիրառվող մեթոդը ներդրվել է դեռ 10-15 տարի առաջ՝ մարդասիրական օգնության բաժանման «Փարոս» համակարգի շրջանակներում: 1999 թվականին, սոցիալական աջակցության համակարգի ռեֆորմով, երբ Հայաստանում սոցիալական աջակցության գործող տարբեր ձևերը միավորվեցին մեկ միասնական՝ ընտանեկան նպաստ համակարգում, որոշում կայացվեց ներդնել և կիրառել «Փարոս» համակարգի արդեն իսկ փորձված մեթոդը:

Գործող համակարգի շրջանակներում իրեն աղքատ (կամ անապահով) համարող ընտանիքը դիմում է սոցիալական ծառայության տարածքային կենտրոն՝ համակարգում ընդգրկման և նպաստ ստանալու խնդրանքով: Տվյալ ընտանիքի համար ստեղծվում է սոցիալական քարտ (անձնագիր) և ընտանիքը հաշվառվում է համակարգում: Համաձայն քարտում լրացված տեղեկությունների, հաշվարկվում է ընտանիքի անապահովության միավորը, որի մեծությունն էլ որոշիչ է, թե արդյո՞ք այդ ընտանիքը կարող է ընդգրկվել համակարգում¹³, թե՞ ոչ: Անապահովության միավորի մեծությունը որոշակիորեն ազդում է նաև ընտանեկան նպաստի մեծության վրա:

Անապահովության միավորի որոշման համար հիմք է հանդիսանում տվյալ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական կարգավիճակը, ընտանիքի անաշխատունակներով ծանրաբեռնվածությունը, եկամուտների մակարդակը և այլն:

Ընտանիքի անապահովության գնահատման միավորը հաշվարկվում է անապահովության գնահատման 12 ցուցանիշների հիման վրա: Բանաձևի քննության արդյունքում տվյալ ցուցանիշները, ըստ իրենց բնույթի, բաժանել ենք 3 խմբի՝ 1. «աղքատածին գործոններ և ռիսկեր», 2. «հավելումներ», 3. «սահմանափակումներ»:

Աղքատածին գործոնները (ռիսկերը)

1. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խմբի հիման վրա հաշվարկվող ընտանիքի անապահովության միջին միավորը՝ $P_{միջ}$
2. Ընտանիքում անաշխատունակների թիվը՝ $K_{ընտ}$
3. Ընտանիքի եկամուտը՝ $K_{եկ}$

¹³ Տեքստում «համակարգում ընդգրկվել» արտահայտությամբ նկատի ունենք ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելը:

Հավելումները

4. Բնակավայրը՝ $K_{տ}$
5. Բնակարանային պայմանները՝ $K_{բն}$

Սահմանափակումները

6. Սեփական ավտոմեքենայի առկայություն,
7. Կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված անշարժ գույքի գործարքների իրականացում,
8. Ձեռնարկատիրական գործունեության իրականացում,
9. Միջազգային առևտրային գործարքների իրականացում,
10. Միջբաղաքային հեռախոսակապից օգտվելու աստիճան,
11. Էլեկտրաէներգիայի սպառման ծավալ,
12. Գործակալության կամ տեսուչի սուբյեկտիվ գնահատական:

Ընտանիքի անապահովության գնահատման համար գլխավորը «Աղքատածին գործոններ կամ ռիսկեր» ցուցանիշների խումբն է: Սրանց միջոցով որոշվում է ընտանիքի անապահովության աստիճանը (միավորը)՝ Էլեկտրոնային տվյալ ընտանիքի սոցիալ-դեմոգրաֆիական առանձնահատկություններից և մեկ շնչի հաշվով եկամուտների մակարդակից:

Ի լրումն այս գործոններով ստացված գնահատականի, առանձին ընտանիքների համար ստեղծվում է լրացուցիչ հնարավորություն կամ տրվում է ավելի մեծ հավանականություն՝ համակարգում ընդգրկման համար: Բանաձևում մտցված է դիֆերենցում՝ կախված ընտանիքի բնակության վայրից (համայնքից) և բնակարանային պայմաններից: Այսինքն՝ նույն սոցիալ-ժողովրդագրական կառուցվածք և եկամուտների մակարդակ ունեցող ընտանիքները կարող են ստանալ անապահովության տարբեր գնահատականներ: «Հավելումներ» կոչված ցուցանիշներով առանձին ընտանիքների համար մեծացվում է «Աղքատածին գործոններով» որոշված անապահովության գնահատականը, որն ըստ ելության փորձ է կրճատելու համակարգի «չընդգրկման սխալը»:

«Սահմանափակումներ» կոչված ցուցանիշներով միարժեքորեն որոշվում է, թե արդյո՞ք տվյալ ընտանիքը, անկախ իր ժողովրդագրական, սոցիալական և այլ առանձնահատկություններից կամ հավաքած միավորներից, կարող է մասնակցել համակարգին, թե ոչ: Փաստորեն, «Սահմանափակումները» ըստ ելության ուղղված են կրճատելու համակարգի «ընդգրկման սխալը»:

Այսպիսով, նպաստի իրավունք ձեռք բերելու համար դիմած ընտանիքների համար հաշվարկվում է ընտանիքի անապահովության գնահատման միավորը՝ որպես վերոնշյալ ցուցանիշների արտադրյալ: Եթե միավորը 0 է և գերազանցում է սահմանային միավորը (ներկայում կազմում է 33.01), ապա տվյալ ընտանիքին տրվում է նպաստ: Նպաստի չափը որոշվում է հետևյալ կերպ՝ նպաստի բազային մեծություն՝ գումարած յուրաքանչյուր երեխայի հաշվով հավելում: Նպաստի բազային չափը և երեխայի հաշվով տրվող հավելման մեծությունը կարող են տարբերվել բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի համար, ինչպես նաև անապահովության գնահատման միավորի մեծությունից կախված:

«Աղքատածին գործոններ կամ ռիսկեր» ցուցանիշների խումբը

Ինչպես նշվեց, այս խումբը գլխավորն է անապահովության գնահատման առումով, ուստի և չափազանց կարևոր է այս խմբում ընդգրկվող ցուցանիշների քննումը: Այս խմբում կան 3 ցուցանիշներ՝ ընտանիքի եկամուտը, անաշխատունակների քանակը և սոցիալական խմբի պատկանելիության միջին միավորը:


Ընտանիքի անապահովության միջին միավորը

Ընտանիքների անապահովության գնահատման ընթացքում գլխավոր դերը պատկանում է ընտանիքի անդամների սոցիալական խմբերի հիման վրա հաշվարկվող $P_{միջ}$ միավորին: Նախապես որոշվում է յուրաքանչյուր անդամի միավորը, ապա հաշվարկվում է տվյալ ընտանիքի միջին միավորը: Ընտանիքի այն անդամները, որոնք չեն պատկանում որևէ խոցելի սոցիալական խմբի՝ ունեն 20 միավոր: Մյուս բոլոր անդամներն իրենց սոցիալական խմբին համապատասխան ստանում են միավորներ: Եթե 1 անդամը պատկանում է մի քանի սոցիալական խմբերի, ապա այդ անդամի միավորը հաշվարկվում է տվյալ սոցիալական խմբերի միավորների գումարման միջոցով, սակայն ամենամեծ արժեքը վերցվում է ամբողջությամբ, երկրորդ ամենամեծ արժեքը՝ 30 տոկոսով, իսկ մնացած հնարավոր արժեքները՝ 10 տոկոսով:

Սահմանված են 16 խոցելի սոցիալական խմբեր, որոնք ունեն նվազագույնը 22, իսկ առավելագույնը 50 միավոր:

Ծածկագիրը	Սոցիալական խմբի անվանումը	Սոցիալական խմբի միավորը
Հ-11	I խմբի հաշմանդամ	48
Հ-22	II խմբի հաշմանդամ	39
Հ-33	III խմբի հաշմանդամ	28
Հ-44	Հաշմանդամ երեխա	45
Ա-55	մինչև 2 տարեկան երեխա	35
Ա-66	2 մինչև 18 տարեկան երեխա	33
Մ-23	Միակողմանի ծնողագուրկ	43
Ե-56	Երկկողմանի ծնողագուրկ	50
Մ-45	Միայնակ մոր երեխա	26
Ա-34	Ամուսնալուծված անձի երեխա	26
Ս-12	Ուսանող (մինչև 23 տ. պետպատվերով)	22
Հ-00	Հղի կին	30
Գ-99	Գործագուրկ	22
Կ-88	Կենսաթոշակառու	34
Կ-87	Միայնակ, չաշխատող կենսաթոշակառու	36
Կ-86	Տարեց կենսաթոշակառու	39


33.01 անցումային միավորի պայմաններում համակարգից դուրս են մնում բազմազավակ և բազմանդամ ընտանիքները: Ընտանիքների անդամների աճի հետ նվազում է առավելագույն միավորը:




Ընդհանուր առմամբ, սոցիալական խմբերի միավորները չեն համապատասխանում աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակի և խորության ցուցանիշներին:

Աղքատության և ծայրահեղ աղքատության միջին մակարդակից բարձր մակարդակ ունեցող բնակչությունը

	Դիրքը նվազման կարգով	Աղքատությունը, մինչև Ընտանեկան նպաստները, %	Ծայրահեղ աղքատությունը, մինչև Ընտանեկան նպաստները, %
Ընդամենը բնակչություն	1	36.3	7.8
Միայնակ մոր երեխաներ	2	69.2	25.4
Մինչև 18 տարեկան հաշմանդամներ	3	47.2	21.8
Բաժանված ծնողների երեխա	4	46.4	21.7
Գրանցված գործազուրկներ	5	54.0	17.9
Աշխատանք չունեցողներ	6	48.4	12.8
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	7	47.6	11.6
Երրորդ խմբի հաշմանդամներ	8	40.6	11.6
0-6 տարեկաններ	9	43.3	9.7
մինչև 17 տարեկաններ	10	40.6	9.4
7-17 տարեկաններ	11	39.5	9.3
Երկրորդ խմբի հաշմանդամներ	12	37.1	9.3
Առաջին խմբի հաշմանդամներ	13	35.3	8.9
0-2 տարեկաններ	14	39.7	8.1
Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	15	45.0	4.5





Ընտանիքի եկամուտը


Այս ցուցանիշը բանաձևում հանդես է գալիս, որպես $K_{եկ}$ գործակից, որն ունի հետևյալ

տեսքը.
$$K = 1.2 - 0.04 \times \frac{\sum_{j=1}^d S_j}{1000 \times n}$$

որտեղ n -ը ընտանիքի անդամների թվաքանակն է, j -ն ընտանիքի եկամուտ ստացող անդամներն են, իսկ d -ն՝ դրանց թվաքանակը, S -ն ընտանիքի անդամի եկամուտն է առանց ընտանեկան նպաստի:

$K_{եկ}$ նվազագույն տրամաբանական արժեքը 0-ն է, իսկ առավելագույն արժեքը՝ 1.2-ը: Ընտանիքը կստանա $K_{եկ}$ -ի առավելագույն արժեքը, եթե որևէ եկամուտ չունի: Երբ ընտանիքի եկամուտը մեծանում է 5000 դրամից, ապա աստիճանաբար նվազում է համակարգում ընդգրկման հնարավորությունը: Երբ մեկ շնչի հաշվով եկամուտը հասնում է 30000 դրամի, ապա $K_{եկ}$ -ը ստանում է 0 արժեք, և ընտանիքը գնահատվում է որպես ապահով և դուրս է մնում համակարգից:

Այլ հավասար պայմաններում, ընտանիքի համակարգում ընդգրկման հավանականությունը կամ անապահովության գնահատականն աճում է, եթե ընտանիքի մեկ շնչի հաշվով եկամուտը 5000 դրամից քիչ է: Ընդ որում, դրա առավելագույն աճը 20 տոկոս է:



Համաձայն ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների բազայի մեր վերլուծության, Հայաստանում 1 շնչի հաշվով 5000 դրամից քիչ ծախսեր կատարող տնային տնտեսություններ գրեթե չկան (0.1 տոկոս,

կամ առավելագույնը 1200 ընտանիք մինչև ընտանեկան նպաստի ստացումը): Ջետևաբար, 5000 դրամից քիչ եկամուտ ունեցող տնային տնտեսությունների թվաքանակը շատ փոքր է¹⁴: Ստացվում է, որ $K_{եկ}$ գործակիցը գրեթե հանդես չի գալիս որպես ցածր եկամուտ ունեցողների ընդգրկման հավանականությունը մեծացնող գործոն: Փաստորեն, սովորաբար $K_{եկ}$ գործակիցը սահմանափակում է ընդգրկման հավանականությունը (5000 դրամից շատ եկամուտ ունեցողների դեպքում):

Աղյուսակում ներկայացվում է եկամտի տարբեր մակարդակների դեպքերում մյուս բոլոր գործոնների հաշվին ընտանիքի նվազագույն միավորների մեծությունը, որպեսզի համակարգում ընդգրկման 33.0 սահմանային մեծության դեպքում ընտանիքն ընդգրկվի: Այսպես, եթե ընտանիքը որևէ եկամուտ չունի, ապա մյուս գործոններով պետք է հավաքի նվազագույնը 27.5 միավոր, որպեսզի ընդգրկվի համակարգում: Եթե ընտանիքի եկամուտը 12000 դրամ է (ծայրահեղ աղքատ է), ապա մյուս գործոնների հաշվին պետք է ստանա նվազագույնը 45.8 միավոր, իսկ եթե 16000 դրամ է (աղքատության գծից շուրջ 20 տոկոսով ցածր), ապա ընտանիքը մյուս գործոնների հաշվին պետք է հավաքի չափազանց բարձր միավոր՝ 58.9, որպեսզի ընդգրկվի համակարգում:

Ըստ էության, 1 շնչի հաշվով 19000 դրամ եկամտի դեպքում $K_{եկ}$ գործակիցը հասնում է իր փաստացի առավելագույն արժեքին՝ 0.44, որի դեպքում ընտանիքը փաստորեն շանս չունի ընդգրկվելու համակարգում:

Համակարգում ընդգրկվելու համար անհրաժեշտ միավորները մյուս գործոնների հաշվին (33.0 անցումային միավորի դեպքում)

Դեպքեր	1 շնչին ընկնող եկամտի մակարդակը, դրամ	K եկամտի գործակիցը	Նվազագույն միավորը մյուս գործոնների հաշվին
Դեպք 1	0	1.20	27.5
Դեպք 2	1000	1.16	28.4
Դեպք 3	2000	1.12	29.5
Դեպք 4	3000	1.08	30.6
Դեպք 5	4000	1.04	31.7
Դեպք 6	5000	1.00	33.0
Դեպք 7	6000	0.96	34.4
Դեպք 8	7000	0.92	35.9
Դեպք 9	8000	0.88	37.5
Դեպք 10	9000	0.84	39.3
Դեպք 11	10000	0.80	41.3
Դեպք 12	11000	0.76	43.4
Դեպք 13	12000	0.72	45.8
Դեպք 14	13000	0.68	48.5
Դեպք 15	14000	0.64	51.6
Դեպք 16	15000	0.60	55.0
Դեպք 17	16000	0.56	58.9
Դեպք 18	17000	0.52	63.5
Դեպք 19	18000	0.48	68.8
Դեպք 20	19000	0.44	75.0
Դեպք 21	20000	0.40	-
Դեպք 22	21000	0.36	-
Դեպք 23	22000	0.32	-
Դեպք 24	23000	0.28	-
Դեպք 25	24000	0.24	-

¹⁴ 1 շնչի հաշվով մինչև 5000 դրամ եկամուտ ունեցողների ծախսերը չեն կարող փոքր լինել եկամուտներից, այսինքն՝ չկա խնայողություններ (թեև հնարավոր են պարտքեր): Ուստի, մինչև 5000 դրամ եկամուտ ունեցողների քանակը փոքր կամ հավասար կլինի մինչև 5000 դրամ ծախսողների քանակին:

Դեպք 26	25000	0.20	-
Դեպք 27	26000	0.16	-
Դեպք 28	27000	0.12	-
Դեպք 29	28000	0.08	-
Դեպք 30	29000	0.04	-
Դեպք 31	30000	0.00	-


Անաշխատունակների բանակը

Այս ցուցանիշը բանաձևում հանդես է գալիս, որպես $K_{ընտ}$ գործակցով, որը որոշվում է հետևյալ կերպ.

$$K_{ընտ} = 1.00 + 0.02 * m$$

որտեղ m -ը ընտանիքի անաշխատունակ անդամների՝ երեխաների, առաջին և երկրորդ խմբի հաշմանդամների, տարիքային կենսաթոշակառուների թվաքանակն է:

Գործակցի նվազագույն արժեքը 1-ն է, որի դեպքում այն չի ազդում անապահովության գնահատման մեծության վրա: Նվազագույն արժեքը ստացվում է, երբ ընտանիքում չկան անաշխատունակներ: Մյուս բոլոր դեպքերում գործակիցն աճում է՝ մեծացնելով անապահովության գնահատականը:



$K_{ընտ}$ գործակցի առավելագույն արժեքը կախված է ընտանիքների մեծությունից, մասնավորապես, բազմազավակությունից: Հայկական իրականությունում ընտանիքի անաշխատունակ անդամների թվաքանակի առավելագույն սպասվող ցուցանիշը կարող է լինել 10, որի դեպքում գործակիցը ստանում է 1.2 արժեք: Այսինքն՝ անաշխատունակ չունեցող և 10 անաշխատունակ ունեցող ընտանիքների անապահովության տարբերությունը, այլ հավասար պայմաններում, գնահատված է 20 տոկոս: Այնուամենայնիվ, այս գործակցի միջին արժեքը շատ ավելի փոքր է: Ըստ նպաստ ստացող տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտության արդյունքների, անաշխատունակներ ընդհանրապես չկան տնային տնտեսությունների 11 տոկոսում, մինչև 3 անաշխատունակ կա 84 տոկոսում, և ընտանիքների միայն 2 տոկոսում է, որ անաշխատունակների թիվը կարող է գերազանցել 5-ը: Այսինքն՝ $K_{ընտ}$ ամենատարածված արժեքները 1.0-1.08 է, որը ցույց է տալիս, որ գործակիցը սովորաբար չունի զգալի դեր:

Անաշխատունակների քանակը և $K_{\text{ընտ}}$ գործակցի արժեքները

տնային տնտեսությունները ըստ անաշխատունակների քանակի (երեխաներ և 63 տարեկանից բարձրներ)	Տոկոս ընդամենի նկատմամբ	Կուտակային տոկոսը	K գործակիցը
Անաշխատունակ չունեցող	11	11	1.0
1 անաշխատունակ ունեցող	31	42	1.02
2 անաշխատունակ ունեցող	23	66	1.04
3 անաշխատունակ ունեցող	19	84	1.06
4 անաշխատունակ ունեցող	10	94	1.08
5 անաշխատունակ ունեցող	4	98	1.10
6 և ավել անաշխատունակ ունեցող	2	100	1.12-1.2

«Չավելումներ» ցուցանիշների խումբը

Այս խմբում առանձնացվել են 2 ցուցանիշներ: Առաջինը բնակավայրի առանձնահատկությունները բնութագրող $K_{\text{տ}}$ գործակիցն է:

Յուրաքանչյուր բնակավայր ունի գործակցի 1, 1.03 կամ 1.05 արժեքները: Առանձնացվել են 182 բնակավայրեր, որտեղ բնակվող ընտանիքների ընդգրկման հավանականությունը, մյուս ընտանիքների համեմատ, աճում է՝ կամ 3 տոկոսով կամ 5 տոկոսով: Ընդ որում, 1.03 գործակիցը տրված է միայն քաղաքներին, բացառությամբ 2 գյուղի:

Բացառությամբ Երևան, Աշտարակ, Արարատ, Արտաշատ, Մասիս, Վեդի, Վաղարշապատ, Արմավիր, Մեծամոր, Աբովյան և Ծաղկաձոր քաղաքների, մյուս բոլոր քաղաքները (թվով 37) ստացել են գործակցի ազդեցիկ արժեքներ: Այսպիսով, տարբերակում է մտցված Երևան և Երևանամերձ քաղաքների և հանրապետության մյուս քաղաքների ընտանիքների համակարգում ընդգրկման հավանականության առումով. այլ հավասար պայմաններում վերջիններն ունեն 3 տոկոսով ավելի, իսկ Մեղրի և Ագարակ քաղաքների դեպքում՝ 5 տոկոսով ավելի մեծ շանս: Փաստորեն, քաղաքների մեծամասնության համար համակարգում ընդգրկման սահմանային միավորը 33.01-ի դիմաց կազմում է 32.05:

Առանձնացված մյուս բոլոր գյուղական բնակավայրերը (145 գյուղ), բացառությամբ Երկուսի, ստացել են 1.05 գործակիցը: Գյուղերի շուրջ 40 տոկոսը փոքր գյուղեր են (մինչև 500 բնակիչ ունեցող): Ընդգրկված գյուղերի շուրջ կեսը հարթավայրային են, իսկ մնացածը՝ նախալեռնային և լեռնային: Բարձր լեռնային գյուղերի թվաքանակը մեծ չէ: Փաստորեն, հանրապետության 145 գյուղերի համար համակարգում ընդգրկման սահմանային միավորը 33.01-ից իջնում է մինչև 31.43:

«Չավելումներ» ցուցանիշների խմբում հաջորդը Բնակարանային պայմանների ազդեցության ցուցանիշն է, որն արտահայտվում է $K_{\text{բն}}$ գործակցով: Գործակիցն ունի 1-ից մինչև 1.2 արժեքները: Նվազագույն արժեքը տրվում է սեփական առանձնատան կամ բազմաբնակարան շենքի բնակարանի դեպքերում: Սովորաբար գործակիցը 1.02-1.07 արժեքներն է ստանում, բացառությամբ «աղետի հետևանքով տրամադրված տնակում» բնակվող ընտանիքների: Վերջինների համար տրվող 1.2 առավելագույն գործակիցն էապես տարբերվում է նախորդող արժեքից (1.7): Այսպիսով, աղետի հետևանքով տրված տնակում բնակվող ընտանիքի համար համակարգում սահմանային միավորը 33.01-ի փոխարեն կազմում է 27.50, անօթևան և մշտական բնակության վայր չունեցողների համար՝ 30.85, իսկ հանրակացարանի չսեփականաշնորհված սենյակում բնակվող ընտանիքների համար՝ 32.04:

«Սահմանափակումներ» ցուցանիշների խումբը

Այս խմբի ցուցանիշները չափազանց կարևոր են և հնարավորություն են տալիս կրճատել ընդգրկման սխալը: Այսինքն՝ այս ցուցանիշները կիրառվում են մյուս գործոնների հաշվին սահմանային մեծությունը հատած ընտանիքների Ընտանեկան նպաստի համակարգի շահառու լինելու հանգամանքը (կամ անապահով լինելը) ճշգրտելու համար, կամ համակարգի տեսանկյունից «ոչ անապահով ընտանիքներին» համակարգից դուրս թողնելու համար: Սրանք պետք է լինեն օբյեկտիվ և գործուն: Ներկայում այս խմբում կան 7 ցուցանիշներ, ներառյալ տարածքային գործակալության (տեսուչի) գնահատականը: Բոլոր ցուցանիշների գործակիցները ստանում են կամ 0 արժեք, այսինքն համակարգում ընդգրկվելը թույլատրելի չէ, կամ 1 արժեք՝ թույլատրելի է:

Այս խմբի ցուցանիշներից 4-ը վերաբերվում են ակտիվների տիրապետմանը և եկամուտների ստեղծման կարողություններին: Մասնավորապես, ներառված են հետևյալ ցուցանիշները.

1. Անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունն ընտանիքում (հաշվարկվում է $K_{ավ}$ գործակցով, որը ստանում է 0 արժեք, եթե 1998 թվականից սկսած ավտոմեքենայի նոր պետհամարանիշ է ստացվել),
2. Անշարժ գույքի սեփականության իրավունքի ձեռքբերումը (հաշվարկվում է $K_{ազ}$ գործակիցը, որը ստանում է 0 արժեք, եթե գործարքի արդյունքում բարելավվել են ընտանիքի կենցաղային պայմանները),
3. Ձեռնարկատիրական գործունեությունը (հաշվարկվում է K_{δ} գործակիցը, որը ստանում է 0 արժեք, եթե ընտանիքի անդամներից գոնե մեկը որևէ ձեռնարկության (ՍՊԸ, ԼՏԸ, ԼՊԸ, ԲԲԸ, ՓԲԸ) հիմնադիր կամ մասնակից է, ավանդատու է կամ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեության որևէ այլ ձևով),
4. Արտաքին առևտրային գործունեությունը կամ բնաիրային տրանսֆերտների ստացումը արտերկրից (հաշվարկվում է $K_{մաքս}$ գործակիցը, որը ստանում է 0 արժեք, եթե ընտանիքի անդամներից գոնե մեկն ապրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային մուծումներ է կատարել):

Այս ցուցանիշները բավականաչափ օբյեկտիվ են և կարող են կիրառելի լինել, եթե հաշվի առնենք, որ Ընտանեկան նպաստ համակարգի շահառուն ամենաաղքատ կամ անապահով խավը պետք է լինի:

Ի լրումն սրանց, այս խմբում կան նաև եկամուտների մակարդակն անուղղակիորեն արտահայտող երկու այլ ցուցանիշներ՝ «Միջազգային հեռախոսակապից օգտվելը» և «Ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի քանակը»:

5. Միջբաղաքային հեռախոսակապից օգտվելը՝ $K_{հեռ}$ գործակից:

Եթե տարվա ցանկացած հերթական երեք ամիսների ընթացքում Միջբաղաքային հեռախոսակապի համար միջին ամսական վճարումները գերազանցում են հայտարարված եկամտի 50 տոկոսը (բայց ոչ պակաս քան 1000 դրամ) կամ ամսական վճարումը կազմում է 5000 դրամ և ավելի, ապա $K_{հեռ}$ գործակիցը ստանում 0 արժեք:

6. Ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի քանակը՝ $K_{է}$ գործակից:

Եթե ամառային ամիսների ընթացքում ընտանիքի սպառած էլեկտրաէներգիայի քանակը գերազանցում է սահմանային չափաքանակը, ապա $K_{է}$ գործակիցը ստանում է 0 արժեք:

Ըստ ելության, սա անապահովության գնահատման բանաձևի ամենակարևոր գործակիցներից մեկն է, որը հնարավորություն է տալիս բացահայտել Ընտանեկան նպաստի

համակարգի տեսանկյունից ոչ անապահով ընտանիքներին, կրճատել ընդգրկման սխալը և հնարավորություն ունենալ առավել հասցեական դարձնել համակարգը:

Ուսումնասիրությունները պարզել են, որ սահմանված էլեկտրաէներգիայի չափաքանակները չափազանց բարձր են: Թեև դրանք սահմանվել են 2005 թվականի փետրվարին, սակայն դրանք անապահով ընտանիքների այսօրյա իրականությունը չեն բնութագրում: Այլ կերպ ասած, ամառային ամիսներին նման սահմանաչափերում կարող են տեղավորվել նաև ոչ աղքատ, նույնիսկ բարեկեցիկ ընտանիքները: Այսպես՝ 1 անդամ ունեցող ընտանիքի համար սահմանված առավելագույն սահմանաչափը կազմում է 3900 դրամ, 2 անդամի դեպքում՝ 5200 դրամ, 3 անդամի դեպքում՝ 6500 դրամ, 4 անդամի դեպքում՝ 7800 դրամ¹⁵ և այլն: Իրականում աղքատ ընտանիքներն անհամեմատ ավելի քիչ են էլեկտրաէներգիա սպառում, քան նշված չափաքանակներն են, նույնիսկ ձմեռային ամիսներին¹⁶: Սահմանաչափն առաջարկում է 1 անդամ ունեցող ընտանիքների համար ամռանը միջին ամսեկան 156 կՎտ/ժ, 2 անդամ ունեցողների համար՝ 208 կՎտ/ժ, 3 անդամ ունեցողների համար՝ 260 կՎտ/ժ և այլն:

Մյուս կողմից, բացահայտվել է, որ անապահովության գնահատման բանաձևի էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշը (K_է գործակիցը) վերջին երկու տարիների ընթացքում չի կիրառվել: Չկիրառման պատճառաբանությունն այն է, որ առկա են դժվարություններ՝ էլեկտրաէներգիայի սպառման տվյալների ձեռքբերման հետ կապված, քանի որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն դադարեցրել է էլեկտրաէներգիայի սպառման տվյալների տրամադրումը: Էլեկտրաէներգիայի չափաքանակի չկիրառումն էապես թուլացնում է բանաձևը և ընդգրկման սխալի մեծացման մեծ վտանգ է ստեղծում:

¹⁵ Հաշվարկված է ցերեկային սպառման սակագնով:

¹⁶ Եզրակացությունը հիմնված է հարցումների և «Հայաստանի քաղաքային բնակավայրերում ջերմամատակարարման իրավիճակի գնահատում» (ՏՀԳ, Երևան 2005) զեկույցի հիման վրա:

Ամփոփում

Բանաձևը փոփոխությունների կարիք ունի: Նախ անհրաժեշտություն կա ճշգրտել սոցիալական խմբերը և դրանց միավորները: $K_{\text{եկ}}$ գործակիցը չափազանց ոչ արդյունավետ է, այն, ըստ էության, սահմանափակող գործոն է հանդիսանում և մեծացնում է ընդգրկման սխալը: Այս գործակցի արդյունքում պաշտոնապես չարձանագրվող եկամուտներ ունեցողները կարողանում են թաքցնել այն և հայտնվել համակարգում, իսկ պաշտոնական աղբյուրներից եկամուտ ստացողները՝ թռչակներ և այլն, եկամուտների փոքր աճի դեպքում դուրս են մնում համակարգից:

Չափազանց մեծ է Աղետի հետևանքով տրամադրված տնակի գործակցի ազդեցությունը՝ 20 տոկոս, որն էապես տարբեր է Անօթևան և մշտական բնակության վայր չունեցողների գործակցից:

Խիստ տարբերակում է մոտրված Երևան և Երևանամերձ քաղաքների և հանրապետության մյուս քաղաքների միջև: $K_{\text{տ}}$ գործակցով հանրապետության առանձին գյուղեր ստացել են արտոնություններ, իսկ մյուսները՝ ոչ: Ընդ որում, այդ գյուղերը չունեն ընդգծված առանձնահատկություն: Մոտեցումը միասնական չէ և կարող է համարվել նույնիսկ անարդար:

Էլեկտրաէներգիայի սահմանաչափերը վերանայման կարիք ունեն: Դրանք չափազանց ազատ են և թույլ են տալիս հեշտորեն համակարգում ընդգրկել ոչ աղքատների: Ընդգրկման սխալը մեծապես պայմանավորվում է Էլեկտրաէներգիայի սահմանաչափի և մյուս սահմանափակող ցուցանիշների չկիրառմամբ: $K_{\text{է}}$ գործակիցը վերջին տարիներին չի կիրառվել: Եթե այս գործակիցը չկիրառվի, անապահովության գնահատման գործող բանաձևը դառնում է չափազանց անարդյունավետ և կոռուպցիոն ռիսկեր պարունակող:

Առանձին դեպքերում բանաձևը սահմանափակում է աղքատների մուտքը: Այսպես, սովորաբար բազմազավակ ընտանիքներն աղքատ լինելու ավելի մեծ ռիսկ ունեն, սակայն 5 կամ 6 երեխա ունեցող ընտանիքը՝ օրինակ Մասիս քաղաքում կամ հարակից գյուղերում բնակվողը, պրակտիկորեն, առանց կեղծիքի չի կարող նպաստի իրավունք ստանալ: Եթե աշխատունակ ծնողներն ունեն 5 երեխա, ապա նրանց հայտարարած եկամուտը չպետք է գերազանցի մեկ շնչի հաշվով ամսեկան 4390 դրամը (ծայրահեղ աղքատության գծից շուրջ 3 անգամ ցածր), իսկ 6 երեխայի դեպքում՝ ամսեկան 5240 դրամը, հակառակ դեպքում միավորները չեն բավարարի (ցածր կլինեն, քան 33.01 սահմանային միավորն է):

Եթե այս ընտանիքները բնակվեն աղետի հետևանքով տրամադրված տնակում, օրինակ՝ Գյումրի քաղաքում, ապա կստանային $K_{\text{տ}}$ և $K_{\text{բն}}$ գործակիցներով հավելումներ, և կբարձրանար եկամուտների առավելագույն թույլատրելի մակարդակը: Սակայն, կրկին իրադրությունն անհանգստացնող է՝ 5 երեխայի դեպքում հայտարարվող եկամտի թույլատրելի սահմանը ցածր է ծայրահեղ աղքատության գծից և կազմում է ամսեկան 9274 դրամ մեկ շնչի հաշվով, իսկ 6 երեխայի դեպքում՝ 9962 դրամ:

Ընդհանուր մոտեցումը հետևյալը պետք է լինի՝ ներքևից մուտքի հնարավորությունը բացել, բայց վերևից խիստ կտրել: Այսինքն՝ առավել շատ մարդիկ և ռիսկային խմբեր պետք է շանս ունենան ընդգրկվելու համակարգում, սակայն, խիստ սահմանափակումների կիրառմամբ, ոչ շահառուները պետք է դուրս մնան համակարգից՝ տեղը գիշելով ամենախոցելիներին:

Քաղաքականության բարելավման ուղղությունները

Սկզբունքների սահմանումը

Հայաստանի զարգացումը և աղքատության հաղթահարումը երկարաժամկետում մեծապես պայմանավորված է արդյունավետ գործող ինստիտուտների առկայությամբ, հասարակության զարգացման և սոցիալական կապիտալի բարձր մակարդակով: Լավ կառավարումը, արդյունավետ համագործակցությունը, մարդկային կապիտալի բարձր մակարդակը տնտեսական աճի ընդլայնման հիմնական ռեսուրսներն են: Այս իմաստով պետք է կարևորել սոցիալական քաղաքականությունը, որպես ոչ միայն աղքատության կրճատման, այլև երկրի զարգացմանն աջակցության և երկարաժամկետ հիմնախնդիրների ապահովման առումներով:

Այլ կերպ ասած, սոցիալական քաղաքականությունը չի կարող ունենալ սոսկ պասիվ բնույթ, այն է՝ հարկեր չվճարող հասարակությունում ոչ մեծ տրանսֆերտային վերաբաշխումներով մեղմել սոցիալական լարվածությունը: Ակտիվ քաղաքականության պահանջը մեծանում է: Սոցիալական աջակցության համակարգը, կրթական և առողջապահական ծրագրերը պետք է զարգացման տարրեր պարունակեն և բխեն երկրի առջև ծառայած մարտահրավերներից:

Հարկ է հստակորեն առանձնացնել քաղաքականությունը կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները և դրանց ուղղված ծրագրերը: Ընդ որում, այս փուլում այդ նպատակները, ըստ էության, խիստ տարբեր են և այլընտրանքային: Կարճաժամկետ նպատակներն ավելի շատ վերաբերում են կյանքի դժվարին պայմաններում հայտնված անձանց և ընտանիքների սոցիալական պաշտպանության խնդիրներին: Վերջինները խիստ կարևոր են և հրատապ, սակայն այս ծրագրերի իրագործումը չի երաշխավորում երկարաժամկետ նպատակների իրագործման առումով ցանկալի առաջընթացը: Երկարաժամկետ նպատակներն ավելի շատ վերաբերվում են երկրի անվտանգության, տնտեսական, սոցիալական և ազգային զարգացման խնդիրներին: Այս իմաստով շահառուն ոչ թե անհատը, ընտանիքը կամ դրանց առանձին խումբն է, այլ ընդհանրապես ողջ հասարակությունը:

Սոցիալական քաղաքականությունն այսօր ավելի շատ հետապնդում է կարճաժամկետ նպատակներ՝ պաշտպանել նրանց, ովքեր ունեն դրա կարիքը, այն ծառայություններով, ինչի կարիքն ունեն: Փաստացիորեն, համակարգն ուղղված է աղքատ և անապահով մարդկանց ծախսերի նվազագույն մակարդակի ապահովմանը, և շատ ավելի փոքր դեր ունի մարդկանց սեփական խնդիրներն ինքնուրույն լուծելու կարողությունների և հնարավորությունների զարգացման առումով: Առկա ծրագրերը սոսկ նվազեցնում են սոցիալական լարվածությունը և զսպում ցնցումները, բայց չեն հակազդում հասարակական սոցիալական ճգնաժամին, չեն աջակցում վստահության և առողջ հասարակության կառուցմանը և զարգացմանը:

Մյուս կողմից, աղքատ և անապահով ընտանիքները, նույնիսկ ստանալով հանրային սոցիալական աջակցություն, այսօր ոչ միայն դուրս չեն գալիս աղքատությունից, այլև վերարտադրում են աղքատությունը: Այսպիսով, սոցիալական աջակցության համակարգը Հայաստանում նպատակաուղղված է աղքատների առօրյա խնդիրները մեղմելուն և չի նպաստում երկրում աղքատության հաղթահարման երկարաժամկետ խնդրին՝ վերջինս թողնելով հանրային քաղաքականության այլ ոլորտներին:

Խնդիր կա վերանայել սոցիալական ազգային ռազմավարությունը և քաղաքականության սկզբունքները: Առանձնացնել շահառուների երկու մակարդակ՝ դժվար պայմաններում հայտնված անհատ կամ ընտանիք, և դժվար պայմաններում հայտնված հասարակություն: Պաշտպանել ընտանիքներին՝ դեռևս չի նշանակում պաշտպանել հասարակությունը: Իսկ հասարակությունը դրա կարիքն այսօր շատ ունի: Սոցիալական քաղաքականության

հասցեավորումը դեպի հասարակություն պետք է նշանակի ժողովրդագրական հիմնախնդիրների հակազդում և զարգացման համար անհրաժեշտ սոցիալական մթնոլորտի կառուցում:

Ընտանեկան նպաստի համակարգի շահառուները

Սոցիալական աջակցության համակարգի հիմնական ձևը Հայաստանում դրամական օգնությունն է, իսկ իրականացվող հիմնական ծրագիրը՝ Ընտանեկան նպաստը: Ընտանեկան նպաստի համակարգն ուղղված է հասարակության ամենաաղքատ կամ անապահով ընտանիքներին: Այն դիտվում է որպես կարծաժամկետ պասիվ սոցիալական միջոցառում, որի նպատակն է աջակցել նրանց, ովքեր չեն կարող օգտվել տնտեսական աճի պտուղներից: Ընտանեկան նպաստի համակարգն այսօր աղքատության հաղթահարման ռազմավարության հիմնական գործիքն է հանդիսանում: Այնուհանդերձ, աղքատության հաղթահարման համար ոչ դրամական տրանսֆերտների ծրագրերը պետք է ավելի մեծ դեր ստանան, իսկ ընտանեկան նպաստի համակարգը կարող է ունենալ նաև զարգացման տարրեր:

2006-ին ՀՀ կառավարության որոշմամբ «Աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը» վերանվանվեց «Ընտանեկան նպաստ ծրագրի»: Այսինքն՝ «աղքատություն» բառը դուրս եկավ անվանումից, որը ենթադրվում է, որ ոչ միայն անվանման փոփոխություն էր, այլև՝ բովանդակության: Այսինքն, դրամական օժանդակության այս հանրային ծրագիրը նպատակաուղղվում է ընտանիքներին, և ոչ պարտադրաբար աղքատ ընտանիքներին: Հանրային աջակցության նմանատիպ համակարգերն աշխարհում ավելի շատ երիտասարդ ընտանիքների պաշտպանությանն են ուղղվում: Այսինքն՝ ամենևին զարմանալի չի լինի, որ Հայաստանում ընտանեկան նպաստի համակարգը, աղքատ և անապահով ընտանիքներից գատ, հասցեավորվի նաև սոցիալական պաշտպանության կարիք ունեցող այլ ընտանիքների:

Ներկայում ընտանեկան նպաստի համակարգը, ըստ էության, ընտրանքային կարգով փոխհատուցում է ցածր վճարվող ապահովագրական կենսաթոշակների, հաշմանդամության և գործազրկության թոշակների և պետության ստանձնած այլ պարտավորությունների ոչ լիարժեք կատարման դիմաց:

Ծնելիության, բնակչության թվաքանակի, բնակչության տարածքային բաշխման գերխնդիրներ ունեցող երկիրը, որի զարգացման հեռանկարներն ու ապագան կապվում են նոր սերնդի հետ, չի կարող սոցիալական քաղաքականության հիմքում չունենալ երեխաներին՝ որպես հիմնական շահառու:

Այսպիսով, ընտանեկան նպաստի համակարգի շահառու կարող է լինել ոչ միայն աղքատ, այլև, օրինակ, բազմազավակ ընտանիքը: Այսինքն՝ հանրային ծրագիրը պետք է աջակցի այն ընտանիքներին, որոնք ունեն դրա կարիքը, ինչպես նաև այն ընտանիքներին, որի կարիքն ունի պետությունը: Բյուջետային սահմանափակման խնդիրը ենթադրում է կշռադատված ընտրություն կատարել այս երկու նպատակների միջև և գտնել հավասարակշռված և արդյունավետ փոխընտրանքը:

Հայաստանում աղքատները շատ են, սակայն միջազգային փորձն ապացուցել է, որ բոլորը դրամական աջակցության շահառու չեն կարող դառնալ: Դա, ըստ էության, ոչ արդյունավետ լուծում է, որը կարող է զսպել սեփական ուժերով աղքատությունը հաղթահարելու խթանները: Բոլոր աղքատներին պետք է մատչելի լինեն այն սոցիալական ծառայությունները (ոչ դրամական տրանսֆերտների), որոնք կօգնեն և կաջակցեն սեփական ուժերով աղքատությունից դուրս գալու համար:

Այն ընտանիքները, որոնք ապրում են ծայրահեղ աղքատության մեջ և չեն կարողանում ապահովել պարենի նվազագույն ծախսերը, պետք է հանդիսանան ընտանեկան նպաստի համակարգի հիմնական շահառուները: Այս ընտանիքների թվաքանակը կազմում է շուրջ 6 տոկոս: Սակայն, շատ ընտանիքներ գտնվում են պարենային գծի շրջանակներում և վտանգված են նույն ռիսկերին՝ կենսական և առողջական: Այսինքն, ընտանեկան նպաստը, այնքանով, որքանով նպատակաուղղված է աղքատներին, պետք է ապահովի այսօր նվազագույն կենսապայման և վաղվա ֆիզիկական առողջություն: Մյուս բոլոր խնդիրներն ու մարդու հիմնարար իրավունքները հարկ է առանձնացնել և դիտել այլ ծրագրերի կամ նույն ընտանեկան նպաստի այլ բաղադրիչի ներքո:

2006-ի մեր հետազոտության տվյալներով, տնային տնտեսությունների 9.9 տոկոսն իրենց համարել են ծայրահեղ աղքատ: Սրանք ծախսերի մակարդակով հաշվարկված ծայրահեղ աղքատ ընտանիքներ են և մի մասն էլ աղքատ ընտանիքներ են: Գտնում ենք, որ ընտանեկան նպաստը, որպես աղքատությանն ուղղված ծրագիր, պետք է ընդգրկի տնային տնտեսությունների շուրջ 10 տոկոսին: Այսինքն՝ ծայրահեղ աղքատ 5-6 տոկոսին և մոտ նույն չափով էլ՝ աղքատ (բայց ոչ ծայրահեղ աղքատ) ընտանիքների:

Անապահովների գնահատման գործող բանաձևի առաջարկվող փոփոխությունների և հնարավոր այլ բարելավումների դեպքում, ամենաաղքատ 10 տոկոսին հասցեավորելու համար անհամեմատ ավելի քիչ ռեսուրսներ կպահանջվեն, քան ներկայում ծախսվում է պետական բյուջեից:

Ստեղծված խնայողությունը կարող է ուղղվել ընտանեկան նպաստի այլ նպատակ հետապնդող բաղադրիչի: Ծրագիրը կարող է հետապնդել քաղաքականության երկարաժամկետ նպատակ. ձևավորել առողջ և երիտասարդ հասարակություն և կասեցնել ազգի անկումը: Այս իմաստով, որպես շահառուներ կարող են դիտվել բազմազավակ ընտանիքները:

Քաղաքականության առաջարկներ

Քաղաքականության մշակումն ընդհանուր առմամբ պետք է բխի ռազմավարության նպատակներից: Ուստի, նախ և առաջ հարկ է մշակել ազգային սոցիալական ռազմավարությունը կամ հայեցակարգը, որը պետք է լինի մասնակցային և հիմնվի ազգային գերակայությունների և առկա մարտահրավերների վրա: Մինչ այդ, արդեն իսկ ակնհայտ դարձած, որոշ խնդիր կարելի է լուծել կամ քաղաքականության բարելավումներ կատարել: Մեր վերլուծությունների արդյունքում, որոշ բաներ շատ հստակ են դառնում: Այսպես, այսօր սոցիալական աջակցության հիմնական ծառայությունն ընտանեկան նպաստի համակարգն է, որը բարեփոխումների կարիք ունի: Ընդ որում, այն կարող է տեղի ունենալ երկու ասպեկտով՝ քաղաքական և ծրագրային:

Քաղաքական ասպեկտում բարեփոխումը ենթադրում է ընտանեկան նպաստի համակարգի նպատակադրումների և կազմակերպման վերանայում: Ծրագրային ասպեկտում բարեփոխումը կվերաբերվի ընտանեկան նպաստ ծրագրի արդյունավետ իրականացմանը և կառավարմանը: Ավելի կոնկրետ՝ առաջինը վերաբերում է նպատակին և ելայանը, երկրորդը՝ մեթոդին, մասնավորապես անապահովության գնահատման բանաձևին:

Հիմնվելով վերը բերված մոտեցումների վրա՝ քաղաքականության հիմնական առաջարկն է փոխել ընտանեկան նպաստի փիլիսոփայությունը: Գործնականում առաջարկվում է ընտանեկան նպաստի համակարգը տարանջատել երկու բաղադրիչների՝ «անապահով

ընտանիքների աջակցության» և «բազմազավակ ընտանիքների աջակցության» բաղադրիչներ:

Այսինքն, առաջարկվում է ընտանեկան նպաստ տալ և՛ աղքատ, և՛ բազմազավակ ընտանիքներին: Դրա ապահովման համար, նախ ծրագրային իմաստով համակարգը պետք է լինի առավել արդյունավետ, որի համար հաջորդ բաժնում բերվում են անապահովության գնահատման բանաձևի բարեփոխման առաջարկներ: Մյուս կողմից, առավել հստակ պետք է դառնա, թե ո՞ր անապահով ընտանիքները պետք է դառնան ընտանեկան նպաստի շահառուները: Մեր առաջարկով, դրանք պետք է լինեն միայն ծայրահեղ աղքատ և պարենային աղքատության գծի շրջակայքում գտնվող տնային տնտեսությունները: Դա, մոտավորապես, տնային տնտեսությունների 10 տոկոսն է, որոնց ամսեկան եկամուտները մեկ շնչի հաշվով փոքր կլինեն 15000 դրամից:

Տեխնիկական իմաստով, ծրագրի կազմակերպումն առաջարկվում է հետևյալ կերպ.

- Առաջին բաղադրիչի՝ «անապահով ընտանիքների աջակցության ընտանեկան նպաստի» դեպքում պոտենցիալ նպաստառուներ սահմանել երեխա չունեցող, 1 երեխա ունեցող, 2 երեխա ունեցող և 10-18 տարիքային խմբում երեք երեխա ունեցող անապահով ընտանիքները: Նպաստառուների որոշման համար կշարունակվի կիրառվել մոտարկման մեթոդը, այսինքն՝ անապահովության գնահատման բանաձևը (որոշակի ճշգրտումներից հետո):
- Երկրորդ բաղադրիչի դեպքում կիրառել կատեգորիալ հասցեավորման մեթոդ: Շահառուներ կհամարվեն 3 երեխա ունեցող, որոնցից գոնե մեկը 0-10 տարիքային խմբին է պատկանում, ընտանիքները և 4 և ավել երեխաներ ունեցող բոլոր ընտանիքները: Այս խմբում հասցեավորման համար որևէ բանաձև չի կիրառվի: Անհրաժեշտության դեպքում կարող է մտցվել եկամուտների մակարդակից կախված սահմանափակող գործակից, սակայն, այն մեկ շնչի հաշվով չպետք է պակաս լինի քան ամսեկան 50000 դրամը:

Երկրորդ բաղադրիչը կներառի գրեթե բոլոր բազմազավակ ընտանիքներին, որոնք, որպես կանոն, անապահով ընտանիքներ են: Նման մոտեցումը թույլ կտա բացառել այս տիպի անապահով ընտանիքների չընդգրկման որևէ սխալ, կնվազի աղավաղումները, ինչպես նաև կհեշտանա կառավարումը: Այն, աղքատության կրճատումից զատ, կունենա նաև դեմոգրաֆիական զարգացման և առողջ ու երիտասարդ հասարակության աջակցության նպատակ: Նպաստների չափի առաջարկվող սցենարի հիմքում դրվել է հատկապես երրորդ երեխայի ծննդի խթանման ազդակը:

Առաջարկների բյուջետային հաշվարկները և շրջանակը ներկայացված են հաջորդիվ, ինչը թույլ է տալիս պնդել, որ առաջարկվողը ֆիսկալ տեսանկյունից կայուն է:

Անապահովության գնահատման բանաձևի բարելավման առաջարկներ

Անկախ այն հանգամանքից, թե քաղաքական ասպեկտում բարեփոխումը տեղի կունենա, թե ոչ, ծրագրային ասպեկտում բարեփոխումը պետք է դիտել անխուսափելի: Վերլուծությունները բացահայտել են, որ ընտանեկան նպաստի համակարգում չափազանց մեծ է չընդգրկման սխալը, այսինքն՝ ծայրահեղ աղքատ ընտանիքների մի հսկայական զանգված նպաստ չի ստանում: Սրա հիմնական պատճառը վատ գործող բանաձևն է կամ դրա ոչ լիարժեք կիրառումը:

Անապահովության գնահատման բանաձևի բարելավման առումով ներկայացվում են հետևյալ առաջարկները, որոնք հիմնված են 2006 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատվերով իրականացված «Տնային

տնտեսությունների հետազոտության» ծրագրի ընթացքում և, մասամբ, սույն կյուրում ներկայացված վերլուծությունների հիման վրա: Ստեղծված տվյալների բազաները հնարավորություն են տալիս առավել մանրակրկիտ վերլուծություններ կատարել: Այս կյուրի շրջանակներում ներկայացնում ենք մեր կարծիքով ամենահիմնական և կարևոր առաջարկները:

Սոցիալական խմբերի հետ կապված առաջարկներ.

- Սոցիալական խմբերից հանել «ուսանողներին» (Ս-12): Ուսանողները համակարգի շահառու չեն կարող լինել: Ուսանող ունեցող ընտանիքներում աղքատությունը շատ ցածր է, և ընտանեկան նպաստը չի կարող փոխհատուցել կրթական ծրագրերի (այն էլ բարձրագույն կրթության) իրականացման հետ առաջացող ծախսերը: Ս-12 վերաբերվում էր պետպատվերով սովորող ուսանողներին, այսինքն՝ այն անձանց, ովքեր արդեն իսկ աջակցություն են ստանում պետությունից: Այսինքն՝ խախտվում է թե՛ նպատակայնության, թե՛ արդարության (հավասարության) սկզբունքը:
- Սոցիալական խմբերից առաջարկվում է հանել նաև «Միայնակ չաշխատող կենսաթոշակառու» (Կ-87) խումբը: Այս սոցիալական խումբը, ըստ էության, բանաձևի տեսանկյունից ավելորդ է, քանի որ այս կամ այն ձևով Կենսաթոշակառու (Կ-88) և Տարեց կենսաթոշակառու (Կ-86) սոցիալական խմբերն արդեն իսկ ունեն բավականին բարձր միավորներ, և միայնակ կենսաթոշակառուները համակարգում կընդգրկվեն:
- «Միայնակ մոր երեխա» և «Ամուսնալուծված անձի երեխա» խմբերը առաջարկվում է պարզության համար միավորել:
- «Միակողմանի ծնողազուրկ երեխա» և «Երկկողմանի ծնողազուրկ երեխա» սոցիալական խմբերում առաջարկվում է մինչև 21 տարեկան սահմանափակումը փոխել մինչև 18 տարեկանի հետ:
- Առաջարկվում է Ա-55 սոցիալական խումբը՝ «մինչև 2 տարեկան երեխա», դարձնել «մինչև 3 տարեկան երեխա», համապատասխանաբար, Ա-66 խմբում «2-18 տարեկան երեխան» դարձնել «3-18 տարեկան երեխա»: Միաժամանակ, առաջարկվում է Զ-00 «Հղի կին (20 շաբաթական և ավելի)» սոցիալական խումբը հավասարեցնել Ա-55 սոցիալական խմբին՝ ներառելով դրա մեջ:
- Առաջարկվում է բարձրացնել Ա-55 և Ա-66 (երեխաներ) սոցիալական խմբերի միավորները, որն իր ազդեցությունը կունենա նաև Հաշմանդամ երեխա, Միայնակ մոր երեխա, Ամուսնալուծված անձի երեխա և Ծնողազուրկ երեխա սոցիալական խմբեր ունեցող ընտանիքների անապահովության միավորի վրա:
- Միաժամանակ, առաջարկվում է նվազեցնել տարեց կենսաթոշակառու, առաջին և երկրորդ խմբի հաշմանդամ (Կ-86, Զ-11, Զ-22) սոցիալական խմբերի միավորները:

Առաջարկվող սոցիալական խմբերի և դրանց միավորների համար տե՛ս հավելվածը:

Բանաձևի մյուս ցուցանիշների առումով ներկայացվող առաջարկները.

- Վերլուծություններում արդեն իսկ հիմնավորվել է, որ $K_{ԵԿ}$ գործակիցը ոչ արդյունավետ գործակից է և նվազեցնում է ծայրահեղ աղքատների ընդգրկման հնարավորությունը: Առաջարկվում է այս գործակիցը դարձնել սահմանափակում, այն է՝ մեկ շնչի հաշվով սահմանված եկամտի մակարդակից բարձր եկամուտների դեպքում գործակցին տալ 0 արժեք, մյուս դեպքերում՝ 1 արժեք: Որպես $K_{ԵԿ}$ սահմանային մեծություն առաջարկվում է սահմանել մեկ շնչի հաշվով ամսական 15000 դրամ: Այս ցուցանիշը փոքր-ինչ բարձր է ծայրահեղ աղքատության գծից: Առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս

նվազեցնել չընդգրկման սխալը, սակայն դեռևս բաց է ընդգրկման սխալի հնարավորությունը (կեղծիքների դեպքում):

- Առաջարկվում է «աղետի հետևանքով տրամադրված տնակում» բնակվող ընտանիքների համար $K_{բն}$ գործակցը 1.2-ից նվազեցնել մինչև 1.1: Այն չափազանց բարձր է մյուսների համեմատ և կորցրել է իր արդիականությունը:
- Բնակավայրի ազդեցությունը որոշող $K_{տ}$ գործակիցը գյուղերի համար առաջարկվում է սահմանել՝ օգտվելով «Համայնքների ընդհանուր պատկերը և դասակարգումը Հայաստանում»¹⁷ հետազոտական աշխատությամբ առաջարկվող դասերից: Մասնավորապես, առաջարկվում է 1.05 գործակից տալ մինչև 17 և 18 դասով սահմանվող բոլոր համայնքներին, այն է՝ նախալեռնային, լեռնային, բարձր լեռնային այն բոլոր համայնքներին, որոնք ունեն մինչև 500 բնակիչ և միաժամանակ Երևանից 151 կմ-ից հեռու են: Մնացած բոլոր գյուղական համայնքների համար $K_{տ}$ գործակիցը սահմանել 1.0:
- Առաջարկվում է նվազեցնել էլեկտրաէներգիայի սահմանաչափերը՝ տարբերակելով այն գազաֆիկացված բնակարաններում բնակվող ընտանիքների համար: Հարկավոր է միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի էլեկտրաէներգիայի սպառման վերաբերյալ տվյալները պարբերաբար ստացվեն: Այս տեղեկատվության վերլուծությունը պետք է իրականացվի կենտրոնացված մակարդակում:
- Միջբաղաքային հեռախոսակապից օգտվելու ցուցանիշը պետք է ներառի բջջային, հանրապետության ներսում միջբաղաքային և միջազգային հեռախոսազանգերի դիմաց վճարները: Այս ցուցանիշի առավելագույն սահմանը՝ 5000 դրամ, նույնպես բարձր է և հարկ կա նվազեցնել մինչև 3000 դրամ: Այս սահմանափակման կիրառումը նույնպես խիստ կարևոր է:

Բյուջետային շրջանակ

ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարությունը սահմանում է, որ ընտանեկան նպաստի համակարգին 2006-2009 թվականներին պետք է ուղղվի ՀՆԱ-ի 1.3-ից 1.2 տոկոսը: Բացարձակ թվով 2006 թվականի բյուջեն գերազանցում է ծրագրային ցուցանիշը, սակայն, որպես ՀՆԱ-ի տոկոս, այն բավականաչափ փոքր է: Առաջնորդվելով զարգացման ընթացիկ տեմպերով և ԱՀՌԾ սահմանաչափերով՝ առաջարկվում է բավականին իրատեսական և պահպանողական սցենար:

Ընտանեկան նպաստներին առաջարկվում է ուղղել ՀՆԱ-ի 1.1 տոկոսը, որը ցածր է ԱՀՌԾ ցուցանիշից, տնտեսական աճի 6 և գների 3 տոկոս աճի պայմաններում: Ստացվում է, որ Ընտանեկան նպաստների բյուջեն կարող է լինել 2008-ին մոտ 34.6 միլիարդ դրամ, իսկ 2010-ին՝ 41 միլիարդ դրամ:

	2004	2005	2006	2007	2008	2009	2010
	փաստ.	փաստ.	սպաս.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	1,908	2,244	2,637	2,879	3,144	3,432	3,747
ՀՆԱ-ի իրական աճ, %	10.5	14.0	13.0	6.0	6.0	6.0	6.0
ՀՆԱ-ի դեֆլյատոր, %	6.3	3.2	4.0	3.0	3.0	3.0	3.0
Ընտանեկան նպաստների բյուջեն ՀՆԱ-ի նկատմամբ, %	0.8	0.9	0.9	0.9	1.10	1.10	1.10
Ընտանեկան նպաստների բյուջեն, մլրդ դրամ	15.8	20.0	24.4	26.4	34.6	37.8	41.2

¹⁷ Տե՛ս ՏՀՀԿ, Երևան 2006

Նման մեծ գումարը սոսկ անապահով ընտանիքներին բաշխելու համար չափազանց անարդյունավետ և ռիսկային կլինի: Եթե դրա մի մասն ուղղվի ընտանեկան նպաստի առաջարկվող նոր բաղադրիչին, ապա գտնում ենք, որ հասարակությունն ավելի շատ կօգտվի:

Ընտանեկան նպաստի համակարգում առաջարկվել էր առանձնացնել հետևյալ երկու բաղադրիչները՝ 1. «անապահով ընտանիքների աջակցության նպաստ» և 2. «բազմազավակ ընտանիքների աջակցության նպաստ»: Ընտանեկան նպաստի առաջարկվող առաջին բաղադրիչին տարեկան կարող է ուղղվել շուրջ 10 միլիարդ դրամ, իսկ երկրորդ բաղադրիչին՝ շուրջ 25 միլիարդ դրամ: Առաջարկվող քաղաքականության սցենարը ներկայացվում է ստորև:

Ընդգրկումը	SS քանակ	Ընդգրկման տոկոս	Ստացողների քանակը	Նպաստի ամսեկան չափը	Տարեկան բյուջե, մլն դրամ	Բյուջեի կառուցվածքը	
3 երեխա ունեցողներ							
0-10 տ. երեխա չկա	ըստ բանաձևի	12	5.5	0.7	25000	200	2.3
2 երեխա ունեցողներ							
0-10 տ. 2 երեխա կա	ըստ բանաձևի	72	5.5	4.0	17000	808	9.1
0-10 տ. 1 երեխա կա	ըստ բանաձևի	43	5.5	2.3	17000	479	5.4
0-10 տ. երեխա չկա	ըստ բանաձևի	66	5.5	3.6	17000	737	8.3
1 երեխա ունեցողներ	ըստ բանաձևի	172	5.5	9.4	12000	1359	15.4
Երեխա չունեցողներ							
Միայնակ տարեցներ	ըստ բանաձևի	46	90.0	41.4	7500	3724	42.1
Անաշխատունակներ	ըստ բանաձևի	304	5.6	17.1	7500	1543	17.4
Ընդամենը բաղադրիչ 1՝ ըստ բանաձևի		714	11.0	79	9,389	8,851	100.0
5 և ավելի երեխա ունեցողներ	բոլորին	3	100.0	2.5	49000	1470	6.0
4 երեխա ունեցողներ	բոլորին	15	100.0	14.6	35000	6121	24.9
3 երեխա ունեցողներ		61	100.0			0	0.0
0-10 տ. 3 երեխա կա	բոլորին	12	100.0	11.7	35000	4914	20.0
0-10 տ. 2 երեխա կա	բոլորին	15	100.0	14.8	30000	5320	21.6
0-10 տ. 1 երեխա կա	բոլորին	23	100.0	22.6	25000	6774	27.5
0-10 տ. երեխա չկա	ըստ բանաձևի	12	-	0.0	-	-	-
Ընդամենը բաղադրիչ 2՝ ըստ երեխաների քանակի		78	84.5	66	30,998	24,599	100.0
Ընդամենը		792	18.3	145	19,266	33,450	136.0
Պլանավորված բյուջե						34,600	
Խնայողություն կամ ճշգրտումների ռեզերվ						1,150	

Օգտագործված հիմնական գրականություն

Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2004-2006թթ.

Economic Database, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), online, http://www.edrc.am/project.html?cat_id=38

«Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր 77(449), դեկտեմբեր 2005թ.

«Հայաստանի Հանրապետության 2007-2009 թվականների պետական միջևճամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, ՀՀ պաշտոնական տեղեկագիր 35(490), հունիս 2006թ.

«Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <http://www.parliament.am>

«Պարզեցված պետական բյուջե», Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն EDRC, Երևան, 2005-2006թթ.

«Սոցիալական ապահովագրության և ապահովության պետական ծրագրերը. 2006թ. պարզեցված բյուջե», Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն EDRC, Երևան, 2006թ.

«Հայաստանի Հանրապետության Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» ՀՀ կառավարության որոշում, ՀՀ պաշտոնական տեղեկագիր 47(282), սեպտեմբեր 2003թ.

«Աղքատության ընտանեկան նպաստի նշանակման և վճարման գործընթացը կարգավորող հրահանգներ», Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագիր և ԱՄՆ ՄՁԳ, Երևան, 2005թ.

«Անապահովության գնահատման համակարգում հաշվառված հաշմանդամների կենսապայմանների ընտրանքային հետազոտության զեկույց», ՀՀ ԱՎԾ, Երևան, 2003թ.

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույց, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2006թ.

«Անապահով ընտանիքները և սոցիալական ծառայությունները Հայաստանում» տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտության զեկույց, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Երևան, 2006թ.

«Տնտեսական քաղաքականություն և աղքատություն» ամսագիր, թողարկում I-III, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Երևան, 2003-2006թթ.

«Հայաստանի սոցիալական միտումները» տեղեկատվական-վերլուծական պարբերական, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Երևան, 2003-2005թթ.

A.Sahakyan, B.Nahapetian, A.Hovanesyan, A.Posarac, "The Formula of Targeted Social Aid in Armenia as Developed on The Basis of Statistical Analysis Methods", Yerevan, 2000

Branko Milanovic, "Social transfers and Social Assistance: An Empirical Analysis Using Latvian Household Survey Data", WB, Policy Research Working Paper 2328, April 2000

Christiaan Grootaert, "Poverty and Social Transfers in Hungary" WB, Policy Research Working Paper 1770, May 1997

Christiaan Grootaert, Jeanine Braithwaite, "Poverty Correlates and Indicator-Based Targeting in Eastern Europe and the Former Soviet Union", WB, Policy Research Working Paper 1942, July 1998

David Coady, Margaret Grosh, John Hoddinott, "Targeting of Transfers in Developing Countries: Review of Lessons and Experience", WB, IFPRI, 2004

Edmundo Murrugarra, "Public Transfers and Migrants' Remittances: Evidence from the Recent Armenian Experience", WB, Economists' Forum Vol. 2 (2002)

Louise Fox, March 2003, "Safety Nets in Transition Economies: A Primer", Social Safety Net Primer Series, World Bank Institute

Martin Ravallion, "A Poverty-Inequality Trade-off?" WB, Policy Research Working Paper 3579, April 2005

Peter Lanjouw, Martin Ravallion, "Poverty and Household Size" WB, Policy Research Working Paper 1332, August 1994

WB Report No. 19385-AM, June 1999, "Improving Social Assistance in Armenia"

WB Report No: 27192-AM, November 2003, "Armenia: Poverty Assessment", Volume I: A Summary of Findings

Աղյուսակներ և հավելվածներ

Աղյուսակ 1. Աղքատության մակարդակը և խորությունը Հայաստանում, 2004 թվական

	Աղքատություն	Աղքատների բաշխումը	Աղքատության խորություն	Ծայրահեղ աղքատություն	Ծայրահեղ աղքատների բաշխումը	Ծայրահեղ աղքատության խորություն
Ընդամենը	34.6	100.0	21.3	6.4	100.0	17.1
Երևանում	29.2	26.8	22.4	6.1	30.2	18.9
Այլ քաղաքներում	43.9	38.8	23.5	9.2	43.9	17.7
Գյուղերում	31.7	34.4	18.0	4.4	25.9	13.8

Աղյուսակ 2. Աղքատության մակարդակի և խորության գնահատականները սոցալակցության ծրագիրը¹⁸ չիրականացնելու դեպքում, 2004 թվական

	Աղքատություն	Աղքատների բաշխումը	Աղքատության խորություն	Ծայրահեղ աղքատություն	Ծայրահեղ աղքատների բաշխումը	Ծայրահեղ աղքատության խորություն
Ընդամենը	36.6	100.0	23.1	8.2	100.0	19.4
Երևանում	30.0	26.1	23.7	7.0	27.4	20.9
Այլ քաղաքներում	46.4	38.7	25.9	12.6	47.4	20.5
Գյուղերում	34.3	35.2	19.5	5.4	25.1	15.9

Աղյուսակ 3. Աղքատության մակարդակի և խորության գնահատականները միայն Ընտանեկան նպաստների ծրագիրը չիրականացնելու դեպքում, 2004 թվական

	Աղքատություն	Աղքատների բաշխումը	Աղքատության խորություն	Ծայրահեղ աղքատություն	Ծայրահեղ աղքատների բաշխումը	Ծայրահեղ աղքատության խորություն
Ընդամենը	36.3	100.0	22.7	7.8	100.0	18.9
Երևանում	29.9	26.2	23.1	6.7	27.5	20.7
Այլ քաղաքներում	45.9	38.7	25.5	11.9	47.1	19.9
Գյուղերում	33.9	35.1	19.3	5.2	25.4	15.0

Աղյուսակ 4. 2004 թվականին աղքատության և ծայրահեղ աղքատության գծերը հաղթահարելու համար պակասող ծախսերի մեծությունը (դեֆիցիտը) 2004-2007 թվականների պետական բյուջեի ծախսերի նկատմամբ

	Տարեկան դեֆիցիտ, մլրդ դրամ	Սոցիալական աջակցության բյուջեների նկատմամբ, %				Ընտանեկան նպաստների բյուջեների նկատմամբ, %			
		2004	2005	2006	2007	2004	2005	2006	2007
Աղքատության դեֆիցիտը 2004-ին									
Բոլոր տիպի սոցալակցությունից հետո	54.5	155.7	123.4	97.5	88.7	345.1	278.4	223.7	206.1
Մինչև Ընտանեկան նպաստների վճարումը	60.8	173.7	137.7	108.8	98.9	384.9	310.5	249.5	230.0
Մինչև Ընտանեկան և այլ սոցիալական նպաստների վճարումը	62.4	178.4	141.4	111.7	101.6	395.3	318.9	256.2	236.1
Մինչև բոլոր տեսակի սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարումը	88.0	251.6	199.4	157.6	143.3	557.6	449.8	361.5	333.1
Ծայրահեղ աղքատության դեֆիցիտը 2004-ին									
Բոլոր տիպի սոցալակցությունից հետո	5.2	14.8	11.7	9.3	8.4	32.8	26.5	21.3	19.6
Մինչև Ընտանեկան նպաստների վճարումը	6.9	19.9	15.7	12.4	11.3	44.0	35.5	28.5	26.3
Մինչև Ընտանեկան և այլ սոցիալական նպաստների վճարումը	7.5	21.5	17.1	13.5	12.3	47.7	38.5	30.9	28.5
Մինչև բոլոր տեսակի սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարումը	15.8	45.3	35.9	28.4	25.8	100.3	80.9	65.0	59.9

¹⁸ Չի վերաբերվում կենսաթոշակների տրամադրմանը, այսինքն՝ ընթացիկ ծախսերի մակարդակը հաշվարկված է առանց ընտանեկան նպաստների, միանվագ դրամական օգնության և այլ նպաստների տեսքով ստացված եկամուտների:

Աղյուսակ 5. Աղքատության և ծայրահեղ աղքատության գծերը հաղթահարելու համար պակասող ծախսերի մեծությունը (դեֆիցիտը) Հայաստանում, 2004 թվականի տարեկան տվյալներ

	միլիարդ դրամով	ՀՆԱ-ի նկատմամբ, %	Պետբյուջեի ծախսերի նկատմամբ, %	Սոցիալական աջակցության բյուջեի նկատմամբ, %	Ընտանեկան նպաստների բյուջեի նկատմամբ, %	1 ոչ աղքատի հաշվով, դրամ
Աղքատության դեֆիցիտը	54.5	2.9	16.3	155.7	345.1	26248
Երևանում	15.4	0.8	4.6	43.9	97.3	21490
Այլ քաղաքներում	23.3	1.2	7.0	66.7	147.8	42823
Գյուղերում	15.8	0.8	4.7	45.1	100.0	19346
Ծայրահեղ աղքատության դեֆիցիտը	5.2	0.3	1.6	14.8	32.8	2496
Երևանում	1.7	0.1	0.5	4.9	10.9	2418
Այլ քաղաքներում	2.4	0.1	0.7	6.8	15.0	4340
Գյուղերում	1.1	0.1	0.3	3.1	6.9	1332

Մինչև Ընտանեկան նպաստների վճարումը

Աղքատության դեֆիցիտը	60.8	3.2	18.2	173.7	384.9	29280
Երևանում	16.2	0.9	4.9	46.4	102.8	22694
Այլ քաղաքներում	26.4	1.4	7.9	75.5	167.3	48462
Գյուղերում	18.1	1.0	5.4	51.9	114.9	22240
Ծայրահեղ աղքատության դեֆիցիտը	6.9	0.4	2.1	19.9	44.0	3348
Երևանում	2.1	0.1	0.6	6.0	13.3	2931
Այլ քաղաքներում	3.5	0.2	1.0	9.9	21.9	6337
Գյուղերում	1.4	0.1	0.4	4.0	8.9	1717

Մինչև Ընտանեկան և այլ սոցիալական նպաստների վճարումը

Աղքատության դեֆիցիտը	62.4	3.3	18.7	178.4	395.3	30067
Երևանում	16.7	0.9	5.0	47.8	105.9	23383
Այլ քաղաքներում	27.1	1.4	8.1	77.5	171.8	49792
Գյուղերում	18.6	1.0	5.6	53.0	117.6	22750
Ծայրահեղ աղքատության դեֆիցիտը	7.5	0.4	2.3	21.5	47.7	3627
Երևանում	2.2	0.1	0.7	6.4	14.1	3113
Այլ քաղաքներում	3.8	0.2	1.1	10.7	23.8	6900
Գյուղերում	1.5	0.1	0.5	4.4	9.8	1893

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, 2004թ. Տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտության տվյալներ, ՏՀԻԿ տվյալների բազա, հեղինակի հաշվարկներ:

Աղյուսակ 6. Ընտանեկան համակարգում ընդգրկված տնային տնտեսությունները

	Աղքատ	Ոչ աղքատ	Ընդամենը	Ծայրահեղ աղքատ	Ոչ ծայրահեղ աղքատ	Ընդամենը
Ընդգրկվածներ	7.7	6.7	14.3	2.5	11.8	14.3
Չընդգրկվածներ	23.7	61.9	85.7	4.1	81.6	85.7
Ընդամենը Հայաստան	31.4	68.6	100	6.5	93.5	100
Ընդգրկվածներ	3.6	3.0	6.6	1.5	5.1	6.6
Չընդգրկվածներ	22.1	71.3	93.4	3.8	89.5	93.4
Ընդամենը Երևան	25.7	74.3	100	5.4	94.6	100
Ընդգրկվածներ	11.4	7.6	18.9	4.6	14.4	18.9
Չընդգրկվածներ	28.3	52.8	81.1	5.1	75.9	81.1
Ընդամենը Այլ քաղաքներ	39.7	60.3	100	9.7	90.3	100
Ընդգրկվածներ	8.2	9.4	17.6	1.5	16.1	17.6
Չընդգրկվածներ	21.1	61.3	82.4	3.2	79.2	82.4
Ընդամենը Գյուղեր	29.2	70.8	100	4.7	95.3	100

Աղյուսակ 7. Բնակչության առանձին խմբերը և աղքատության ցուցանիշները

	Աղքատություն		Ծայրահեղ Աղքատություն		Աղքատության ճեղք		Ծայրահեղ Աղքատություն ճեղք	
	2004թ	Մինչ ըԼ	2004թ	Մինչ ըԼ	2004թ	Մինչ ըԼ	2004թ	Մինչ ըԼ
Ընդամենը բնակչություն	34.6	36.3	6.4	7.8	21.3	22.7	17.1	18.9
18 և բարձր տարեկաններ	33.3	34.7	6.0	7.1	21.2	22.4	16.9	18.5
մինչև 17 տարեկաններ	38.1	40.6	7.4	9.4	21.5	23.3	17.5	19.7
0-2 տարեկաններ	39.5	39.7	7.3	8.1	21.3	22.4	17.9	19.6
0-6 տարեկաններ	41.8	43.3	7.9	9.7	21.4	22.6	18.1	19.0
7-17 տարեկաններ	36.7	39.5	7.1	9.3	21.6	23.6	17.2	20.0
48-63 տարեկաններ	30.2	31.3	5.2	6.1	21.0	21.9	15.5	17.7
64-74 տարեկաններ	32.3	34.7	5.8	6.8	21.1	22.3	17.4	19.2
75 և բարձր տարիքի կենսաթոշակառու	33.0	33.0	3.5	5.2	17.6	20.5	16.6	19.9
Միայնակ կենսաթոշակառու	16.7	26.9	3.2	5.7	15.2	23.8	13.9	29.3
Բոլոր տիպի կենսաթոշակառուներ	31.1	33.5	5.4	6.7	20.8	22.2	17.3	19.6
Առաջին խմբի հաշմանդամներ	32.2	35.3	4.8	8.9	22.7	24.4	17.2	18.4
Երկրորդ խմբի հաշմանդամներ	33.1	37.1	7.7	9.3	23.0	23.9	16.8	18.8
Երրորդ խմբի հաշմանդամներ	38.3	40.6	10.7	11.6	24.1	25.3	17.3	18.9
Մինչև 18 տարեկան հաշմանդամներ	45.0	47.2	7.8	21.8	24.0	29.3	20.2	14.6
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	42.7	47.6	6.1	11.6	20.5	25.2	14.3	20.4
Միայնակ մոր երեխաներ	66.5	69.2	9.1	25.4	26.3	34.3	34.3	27.8
Բաժանված ծնողների երեխա	44.1	46.4	15.8	21.7	28.7	34.1	22.1	24.2
Երկկողմանի ծնողազուրկ երեխա	40.3	45.0	4.5	4.5	20.9	23.8	35.9	75.0
Յրի (20 շաբաթական և ավելի)	31.0	31.0	6.4	6.4	20.1	21.0	11.2	15.6
Աշխատանք չունեցողներ	47.2	48.4	11.0	12.8	24.0	25.4	18.3	20.2
Գրանցված գործազուրկներ	51.6	54.0	12.8	17.9	25.3	28.8	21.8	23.8
Ուսանող (մինչև 23 տ, պետպատվեր)	11.5	13.3	0.6	2.5	19.3	20.3	9.6	15.2
Ուսանող (մինչև 23 տ, վճարովի)	6.2	7.0	0.3	0.7	13.9	14.0	26.3	16.3

Աղյուսակ 8. Սոցիալական ապահովության և ապահովագրության պետական բյուջեի 2006թ. ծրագրերի փորձագիտական դասակարգում

	Ընդամենը Բյուջեն, մլն դրամ	Սոցծառ այության տեսակը	Հիմնական շահառուներ ը	Շահառու ների քանակը	Ամսական բյուջեն 1 շահառուի հաշվով, դրամ
Կենսաթոշակային ապահովում, որից՝	17,052				
Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում	10,049	Տրանսֆերտ	Կետերանսեր և զինծառայողներ	36,094.0	23,200
Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում	2,462	Տրանսֆերտ	Կետերանսեր և զինծառայողներ	16,847.0	12,179
Սոցիալական կենսաթոշակներ (ներառում է նաև հաշմանդամներին)	3,261	Տրանսֆերտ	Կենսաթոշակառուներ	44,923.0	6,050
Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղձման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում	53	Տրանսֆերտ	Հաշմանդամներ	966.0	4,531
ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների և ամենամսյա դրամական օժանդակություն և կենսաթոշակի տարբերության հատուցում	154	Տրանսֆերտ	Կենսաթոշակառուներ	տ/չ	տ/չ
ՀՀ պետական բյուջեից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համաձայն ապահովագրական ստաժի փոխհատուցում	1,073	Տրանսֆերտ	Այլ և բռնադատվածներ	տ/չ	տ/չ
Պետական նպաստներ բնակչությանը, որից՝	27,034				
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն	24,358	Տրանսֆերտ	Անապահով ընտանիքներ	132,400.0	15,331
Մինչև 2 տարեկան երեխա խնամող և մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստ	218	Տրանսֆերտ	Երեխաներ	7,800.0	2,328
Հղիության և ծննդաբերության նպաստ	1,094	Տրանսֆերտ	Երեխաներ	5,963.0	15,291
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	1,265	Տրանսֆերտ	Երեխաներ	35,728.0	35420*
Ֆինանսական աջակցություն գործազուրկներին ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և աշխատատեղեր ստեղծելու համար	10	Տրանսֆերտ	Գործազուրկներ	տ/չ	տ/չ
Աշխատաշուկայում խոցելի խմբերին աշխատանքի ընդունելու դեպքում աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին	24	Այլ	Հաշմանդամներ	տ/չ	տ/չ
Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող հաշմանդամների համար մասնագիտական աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպում	5	Այլ	Հաշմանդամներ	տ/չ	տ/չ
Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	60	Այլ	Գործազուրկներ	տ/չ	տ/չ
* միանվագ վճար					
Սոցիալական ապահովության միջոցառումներ, որից՝	4,720				
ընդամենը մինչև 50 միլիոն դրամի ծրագրեր (23 ծրագիր)	309				
ընդամենը 50 միլիոն դրամից թանկ ծրագրեր, որից՝	4,411				
Սոցիալական աջակցության ծրագրի ծառայությունների շրջանակում Աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռքբերում	292	Այլ	Անապահով ընտանիքներ	տ/չ	տ/չ
Զբաղվածության ծառայությունների ծրագրի շրջանակներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքներ	700	Այլ	Գործազուրկներ	8,830.0	6,606
Մարդասիրական օգնության կարգով ստացվող սննդի բաշխման ծառայությունների ձեռքբերում	55	Այլ	Անապահով ընտանիքներ	տ/չ	տ/չ
Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայությունների շրջանակներում պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին	324	Այլ	Երեխաներ	687.0	39,345
Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական ապահովում և դրանց վերանորոգում	650	Այլ	Հաշմանդամներ	12,898.0	50361*

Այլ օբյեկտների հիմնանորոգում	116	Այլ	Տարեցներ	տ/չ	տ/չ
Տարեցներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով պետական աջակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին	951	Այլ	Տարեցներ	1,000.0	79,216
Տարեցներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով պետական աջակցություն «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ին	64	Այլ	Տարեցներ	1,200.0	4,478
Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում բժշկա-սոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության տրամադրման նպատակով պետական աջակցություն «Արթմեդ» բժշկավերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ին	52	Այլ	Հաշմանդամներ	407.0	10,668
Սոց. ապահովագրության և սոց. ապահովության ծառայությունների ծրագրի շրջանակներում «Սոցիալական ապահովության քարտերի համակարգի ներդրման, տեղեկատվական բազայի վարման և շահագործման նպատակով պետական աջակցություն «Նորք տեղեկատվական-վերլուծական կենտրոն» ՓԲԸ-ին	133	Այլ	այլ	տ/չ	տ/չ
Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով պետական աջակցություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին	955	Այլ	Երեխաներ	935.0	85,077
Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում երեխաների սոցիալական հոգաձուլության իրականացման նպատակով պետական աջակցություն երեխաների սոցիալական հոգաձուլության կենտրոն ՊՈԱԿ-ներին	119	Այլ	Երեխաներ	200.0	49,743

* տարեկան գումար

Այլ սոցիալական ծրագրեր, որից՝	5,894				
ընդամենը մինչև 50 միլիոն դրամի ծրագրեր (6 ծրագիր)	57				
ընդամենը 50 միլիոն դրամից թանկ ծրագրեր, որից՝	5,838				
Միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին	130	Տրանսֆերտ	Վետերաններ և զոհվածի ընտանիքներ	տ/չ	տ/չ
Վետերանների պատվովճար	1,054	Տրանսֆերտ	Վետերաններ և զինծառայողներ	տ/չ	տ/չ
Վարժական հավաքների և զինծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների հուղարկվողության, զերեգմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցում	187	Տրանսֆերտ	Չոհվածի ընտանիքներ	տ/չ	տ/չ
Արտոնյալ պայմաններով երկարաժամկետ բյուջետային վարկերի տրամադրում բռնադատված քաղաքացիներին անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու համար	150	Այլ	Բռնադատվածներ	տ/չ	տ/չ
ՀՄ պատերազմի վետերաններին, 25.1998 ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում	1,841	Տրանսֆերտ	Վետերաններ և զինծառայողներ	տ/չ	տ/չ
ՀԲ աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագիր	1,476	Այլ	Այլ	տ/չ	տ/չ
Հայինայբանկում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում	1,000	Այլ	Տարեցներ	տ/չ	տ/չ